

Հայկական գիտահետազոտական հանգույց  
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

ՀԱՄ Կ (Բ) Կ XVII ԿՈՆՖԵՐԱՆՍ

ՈՐՁՈՆԻԿԻՑԵ

ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ  
ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

1931 թվին ՅԵՎ 1932 թվի ԽՆԴԻՐՆԵՐԸ


10 APR 2018

ՀԱՄ Կ(Բ)Կ XVII ԿՈՆՖԵՐԱՆՍ

ՈՐ ԶՈՆԻԿԻ ՀԵ

ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ  
ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ 1931 թվին ՅԵՎ  
1932 թվի ԽՍԴԻԲՆԵՐԸ

(Ձեկուցում տրված 17-րդ կուսկոնքներնում)



ՊԵՏՀՐԱՍ

1932

ՅԵՐԵՎԱՆ

**ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ  
ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ 1931 ԹՎ.ԻՆ ՅԵՎ. 1932 ԹՎ.Ի  
ԽՆԴԻՐՆԵՐԸ**

Հնկերներ, հնդամյակի կատարումը չորս տարում, մեր յերկրի սոցիալիստական եկոնոմիկայի հիմքի կառուցման ավարտումը և յերկրորդ հնդամյակի նախապատրաստությունը հսկայական չափով կախված են այն բանից, թե ինչպես ե տշխատում արդյունաբերությունը, ինչպես ե նա աշխատել 1931 թ. և ինչպես կաշխատի 1932 թ.: Կարիք չեմ զգում կրկնել այսակղ, վոր մեր վաղջ կառուցվածքի վերակառուցումը կախված է մեր արդյունաբերության զարգացումից: Թույլ տվեք ուղղակի անցնել իմ զեկուցման հաշվետու մասին:

**1. 1931 ԹՎ.Ի ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ՅԵՎ. ԱՌԱՋՆՅԱ-  
ՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

**1931 ԹՎ.Ի ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ**

Հնկերներ, 1931 թվականը տվեց մեր արդյունաբերության հսկայական աճ: Ամբողջ արդյունաբերության արտադրանքի աճը 1930 թ. համեմատությամբ կազմում է 21%: 1931 թ. արդյունաբերությունը տվեց 27 միլիարդ ռուբլու արտադրանք՝ այդ թվում ծանր արդյունաբերությունը՝ 11,8 միլիարդ ռուբլու, աճ՝ 28,7%: Թեթև արդյունաբերությունը՝ 7.600 միլ. ռուբ. աճ՝ 12,6%: Անտեսային արդյունաբերությունը՝ 2½ միլիարդ ռ., աճ՝ 12,6%: Խատուղկոմատի արդյունաբերությունը՝ 5 միլիարդ ռ., աճ՝ 22%:

Արդյունաբերության առանձին ճյուղերում, ընկերներ, մենք ունենք բավական բուռն աճում, ինչպես մեքենաշինությունը, վոր տվեց 40% աճ, նախորդ տարվա համեմատությամբ, այդ թվում դազդյահաշնությունը՝ 73%, ելեկտրոնիկական արդյունաբերությունը (ԲԹՕ) 61,5%: Ելեկտրական եներգիայի արտադրության քանակն ավելացավ 43%-ով, նավթարդյունաբերությունը՝ 22,6%, հիմնական քիմիան՝ 17,4%, քարանի, արդյունաբերությունը՝ 14,3%, դուռավոր մետալուրգիան:

9%: մետալուրգիան ընդհանուր առմամբ մնաց անցյալ տարվա ժակարդակի վրա, իսկ վորակային պողպատների արտադրությունն ավելացավ յերեք անգամ:

Արդյունաբերության առանձին ճյուղեր կատարեցին հնդամյակը 3 տարում: մեքենաշինությունը հնդամյակի հինգերորդ տարում (1932—33 թ.) պետք է տար ընդհանուր առմամբ 4,350 միլ. ռուբլու արտադրանք, իսկ 1931 թ. արդեն արտադրված է 4,730 միլ. ռուբլու արտադրանք. Ելեկտրո-մեխանիկական արդյունաբերությունը հնդամյակի վերջին տարում պետք է տար 895 միլ. ռուբլու արտադրանք, իսկ 1931 թ. տվեց արդեն 925 միլ. ռ. նավթ պետք է ստացվեր 21,7 միլ. ռուն, իսկ 1931 թ. փաստորեն ստացված է 23,1 միլ. ռուն. ուղինի արդյունաբերությունն ընդհանուր առմամբ պետք է տար 440 միլ. ռ. արտադրանք, իսկ առաջնավել է 461 միլ. ռ., Հաղ. Ճան. Ժողկոմատին ըստ հնդամյա պլանի 1932—33 թ. թ. պետք է տրվեր 12.600 վագոն, փաստորեն 1931 թ. տրված է 20.000 վագոն: 3 տարում տրակտորային գյուղատնտեսական ինվենտար է արտադրված 378 միլ. ռուբլու, այսինքն՝ 32%-ով ավելի, քան նախատեսված էր ընդհանուր առմամբ ամբողջ հնդամյակի համար (286 միլ. ռ.): Սրանք հնդամյակը յերեք տարում կատարած և գերակատարած ճյուղերն են:

Մի շաբաթ այլ ճյուղեր թեև այդպիսի արդյունքներ ձեռք չբերեն, սակայն զգալիորեն զերազանցում են հնդամյակով 1931 թվի համար նախատեսվածը:

Ռայոնական կայաններում ելեկտրոններդիա պետք է ստացվեր 5 միլ. կլվ. ժ., փաստորեն ստացված է 6,4 միլիարդ կլվ. ժ.: Քարածուխն ըստ հնդամյա պլանի՝ յերրորդ տարում պետք է արտադրվեր 53 միլ. ռուն, սակայն ունենք 56 միլիոն ռուն. տորֆ՝ 9 միլ. ռուն, փաստորեն արտադրված է 9½ միլ. ռուն, որակառը՝ նախատեսված էր արտադրել 8.000 հատ, արտադրված՝ 40.000 հատ. Հաղ. Ճան. Ժողկոմատի համար պետք է արտադրվեր 660 հատ շողեշարժ, իսկ 1931 թ. արտադրված է 812 հատ., ուղեկաթառ նախատեսված էր 145.000 քառ. մետր, արտադրված՝ 206.000 քառ. մետր: Կոշիկ նախատեսված էր 60 միլ. զույգ, արտադրված է 76,8 միլ. զույգ. կրկնակոշիկ՝ 51 միլ. զույգ, արտադրված է 53.9 միլ. զույգ: Տուրքին նախատեսվում էր 300.000 կլվ., 1931 թ. շինած է 753.000 կլվ.: Սրանք, ընկերներ, այն ճյուղերն են, վորոնք զերազանցում են հնդամյակով 1931 թ. համար նախատեսված սահմանները:



11-36183 գր

իսկ, յեթե վերցնենք ամբողջ արդյունաբերության ընդհանուր արտադրանքը, այլպես ևս մենք կունենանք անցած տարում զգալի գերազանցում հնդամյա պլանի նախատեսումների Ամբողջ արդյունաբերության ընդհանուր արտադրանքը 1931 թ., ըստ հնդամյա պլանի, պետք է կազմեր 19,6 միլիարդ ռ., իսկ 1931 թ. մենք ունենք 27 միլիարդ։ Ծանր արդյունաբերության գծով 1931 թ. մենք պետք է ունենայնք, ըստ հնդամյա պլանի, 7 միլիարդ ուռըլու արտադրանք, իսկ ունենք 10 միլիարդ ռ. արտադրանք։

1931 թ. մենք աճում ունենք նաև թեթև արդյունաբերության գծով, թեև գյուղատնտեսական հումքի պակասը դեռ սահմանափակում է այդ աճումը։


Կայն գործածության առարկաների արտադրության գծով 1931 թ. մենք ունենք հետևյալը — բամբակյա դործվածքներ՝ 2.246 միլ. մետր, բրդեղեն պատրաստի ապրանք՝ 132,7 միլ. մետր, մետաքսեղեն պատրաստի ապրանք՝ 18,5 միլ. մետր, արհեստական մանվածք՝ 1.774 տոնն, կարարդյունաբերության արտադրանք՝ 1.722 միլ. ոռըլու, տրիկոտաժ արդյունաբերության՝ 404 միլ. ոռըլու, կոշկեղեն՝ 76,8 միլ. զույգ, կրկնակոչիկ՝ 52 միլ. զույգ, դործածության սաղոն՝ 127.000 տոնն (միայն ԺԳԽ-ի գծով)։ Կայն դործածության առարկաների արտադրության գծով ևս մենք աճում ունենք նախորդ տարվա համեմառությամբ— բրդեղեն դործվածքները՝ գրեթե 3%, մետաքսեղեն դործվածքներ՝ 4,4%, արհեստական մանվածք՝ 200%։ այս ճյուղը մեզ մոտ նոր է միայն սկսում զարգանալ։ Կարարդյունաբերությունը տալիս է 53% աճում, տրիկոտաժը՝ 29,5%, կրկնակոչիկը՝ 27%, դործածության սաղոնը՝ 13%։

Արտադրության մեծ աճման գուգրնթաց, վեթիարի չտիրոջավալիք կապիտալ շինարարությունը։ Կապիտալ/ներդրումները 1931 թ. (ելեկտրիֆիկացիայի հետ միասին) կազմում են 7 միլիարդ ոռըլի, այսինքն՝ ավելի, քան նախորդ 2 1/4 տարում, յերր ներդրվեց ընդամենը 6.087 միլ. ռ.։ Շահագործման են գրված 3,5 միլիարդ ոռըլու նոր ձեռնարկություններ և ագրեգատներ, իսկ նախորդ 2 1/4 տարում՝ 3.390 միլ. ռ.։

Մեր աճման հետ միաժամանակ, ամբողջ կապիտալիստական աշխարհում վեթիարի չտիրոջ ընկնում է արտադրությունը և քայլայի ում են արտադրողական ուժերը։ Մեր տարեկան աճումը կազմում է 21%, վորպիսին վոչ մի ժամանակ, արդյունաբերության վերելքի լավագույն շրջաններում չի ունեցել վոչ մի կա-

պիտալիստական յերկիր։ Ամենամեծ աճուրը, վոր յեղել է ՀԱՄՆ-ում (վոր ընդհանրապես ունկորդային տեմպեր ե ունեցել կապիտալիզմի պատմության մեջ) կազմում է 5—6—7%։ Իսկ այսոր ամբողջ կապիտալիստական աշխարհում տեղի ունի ամենաանողոք զբաժանմամբ, վոր ահա յերկու տարի յե, ինչ շարունակվում է։ Այս գիտքամում, վոր կազմված և Ադգերի Լիգա-ի տվյալներով, գուք տեսնում եք, թե ինչպես արտադրության կորագիծը գահավիժորեն ընկնում է։ 1926 թվի համեմատությամբ արտադրությունը ՀԱՄՆ-ում ընկել է 31,5%-ով, Գերմանիայում՝ 16%-ով, իսկ ամբողջ կապիտալիստական աշխարհում՝ 20%-ով։

Իսկ ի՞նչ է կատարվում մեր յերկրում։ Իրեն յելակեալ վերցնենք նույն 1926 թվականը։ Թեև Ազգերի Լիգան զգալի չափով նվազեցրել է մեր աճումը, բայց պատկերն այդ գեղգում ևս ապչեցուցիչ է—1926 թ. մենք ունենինք 100%, հետո՝ 127%, 147%, 170%, 198% և 1931 թ.՝ 219%, իսկ իրականության մեջ՝ 1931 թ. մենք ունենք վոչ թի 219% 1926 թվի համեմատությամբ, ինչու կարծում է Ազգերի Լիգան, այլ 279% (ԾԱՓԱՀԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ)։



Ահա՛, ընկերնե՛ր, դինամիկան մեղ մոտ և կապիտալիստական յերկրներում:

Բայց պե՞տք ե, արդյոք, ընկերնե՛ր, այստեղից անել այն յեղակացությունը, վոր տեխնիկական-տնտեսական տեսակետից աշխամտա-յեվրոպական և ամերիկական յերկրներին «Հասնելու և անցնելու» մասին Վլադիմիր Խլիչին նշանավոր լոգումը մենք արդեն կատարել ենք: Իհարկե՝ վոչ: Զնայած մեր արդյունաբերության բուռն աճման, մենք առայժմ հեռու յենք այդ լոգումնդի իրադրծումից: Հեռու յենք թեկուղ նրա համար, վոր նույն ՀՍՄ-ը 1931 թ. տալիս ե 19 միլ. տոնն թուջ, իսկ մենք տվել ենք նույն թվին 5 միլ. տոնն: Նույն Գերմանիան 1931 թ. տալիս ե 6 միլ. տոնն: Ճիշտ է, Անդվան տալիս ե 3,7 միլ. տոնն: Բայց այդ նշանակում ե միայն այն, վոր Անդվայի մե մետալուրգիան 1931 թ. 70 տարով յետ և շղթաված: «Հասնել և անցնել», այդ նշանակում ե ունենալ 42 միլ. տոնն թուջ, վոր ուներ Ամերիկան 1929 թ.:

### ՆՈՐ ՏԵԽՆԻԿԱՅԻՆ ՏԻՐԱՊԵՏՈՒՄԸ

Բայց լոկ քանակական աճման թվերով չի կարելի տալ, այն վորակական տեղաշարժերի պատկերը, վորոնք տեղի յեն տանենուածեր արդյունաբերության մեջ:

1931 թ. առաջին անգամ, մենք գործնականորեն են ընդհուտ ձեռնամուխ յեղանք տիրապետելու նոր տեխնիկային և կազմակերպելու նոր արդյունաբերություններ ինչպես աշխատող գործարաններում, այսպես ել շահագործման տրվող նոր գիտանտներում:

Մենք, ընկերնե՛ր, 1931 թ. շահագործման դրինք 3,5 միլիարդ սուբլու նոր ձեռնարկություններ, —մի մեծություն, վոր ինքնին բավական պատկառելի յե, բայց միաժամանակ պետք ե ինկատի ունենալ, վոր 1931 թ. և 1932 թ. հունվար ամսին մենք շահագործման դրինք նորագույն տեխնիկայի մի շարք վիթխարի ձեռնարկություններ, վորոնք բացառիկ նշանակություն ունեն մեր հետադրագործման համար—նիժնի նովզորովի ավտոմոբիլի գործարանը՝ 140.000 ավտոմոբիլի արտադրողականությամբ, Խարկովի տրակտորի գործարանը՝ 50,000 տրակտորի, Մոսկվայի ավտոմոբիլի գործարանը՝ 30,000 բեռնատար մեքենայի, ծանր մեքենաշինության Ռուբալյան գործարանը, Սարատովի կոմբայնի գործարանը՝ 20,000 կոմբայնի, նիժնի-նովզորովի Փրեզերային դադդյաների գործարանը՝ տարեկան 12,500 դադդյանի արտադրողականությամբ, ունկալվերային դադդյաների գործարանը Մոսկվայում՝

6

տարեկան 6.000 դադդյանի, Ուրալի պղնձաձուլական գորարանը՝ 20,000 տոնն պղնձի արտադրողականությամբ: Բելգուային շրջանից այն կողմն շինվեց արդյունաբերական շաղաք և ծավալվեցին Խիրինի ապատիտների մշակման շխատանքները, շինվեցին տրութչատկաններ և կրեկինդներ: Վյութվում խորհրդային ինժեներներ Շուխովի և Կոպելյուշ-էիկովի սիստեմի կրեկինդը. գործարկման նախորյակին և գտնվում շուկանեցկի մետալուրգիական գործարանը, այսոր սկսեց ծխալ Մագիստրովսկի վիթխարի մեծության առաջին հնոցը, վորի հավաարը չբողջ աշխարհում (ծափահարություններ): Մոտ գրես շահագործման ե դրվում Բելգենիկի կոմբինատի առաջին հերթը, Նեվայի քիմիկական գործարանը, Վոսկրեսենսկի քիմիական գործարանը, առաջիկա յերկու-յերեք շարաթում գործարանը, վոր տալու յետաքական 24 միլ. հենակալ (պօճպինիկ), սկսվել է Մոսկվայի «Ֆրեգեր» գործիքներ շինող գործարանի մոնտաժը. գործարկվել ե 69 սծխահոր 28 միլ. տոնն տարեկան արտադրողականությամբ, այդ թվում 4 հանքահոր, ամեն մեկը տարեկան մեկ միլիոն տոնն արտադրողականությամբ, և № 5/6 հանքահորը Պրոկոպյեվյան ուսունում, 1,600 տոնն կարողությամբ:

Այս տարի գործարկված են մեկ միլիոն կիլովատ կարողությամբ նոր ելեկտրակայաններ, այսինքն զբեթե այնքան, վորքանախորդ յերկու տարեկան տոնն այնքան, վորքան կար ցաւական թուսամասանում 1913 թ.: Նրանցից կարեւորագույն շայաններն են—Շաերովյան կայանը, լրացուցիչ գործարկված ե 13,000 կլվ., Կաշիրինը՝ 44,000, Իվուրիս՝ 72,000, Նեգրիս՝ 94,000, Ղենինդրագիք յերկորդ կայանը՝ 48 հազար, Զույեվի՝ 150,000, Ղելյարինսկի կայան՝ 48,000 կլվ., Մագնիսովորսկի՝ 36,000 կլվ., Կիգելի՝ 22,000 կլվ., Ստալգրիս՝ 24,000 կլվ. և Զերժինսկի՝ 24,000 և այլն:

Տաս տարի տառաջ, 1921 թ., կոմինտերնի 3-րդ կոնգրեսում Հաղոմիր իլլիչն ասում եր—«12 հազար կիլովատը շատ համեստ կիզր ե: Թերեւս գերմանական և չվեղական ելեկտրիֆիկացիային հանոթ ռատարերկրացիները դրա վրա ծիծաղեն, բայց լավ կծիծաղի նա, ով վերջն ե ծիծաղում»\*: Իրավացի յեր իլլիչը, յերբ նաւրախանում եր հեղափոխության տարիներին 12.000 կլվ. գործարկելու համար: Նա Հավատացած եր, վոր շատ տարի չի անցնել, յերբ մենք միլիոններ կործարկենք:

\* 1 Անդին, XXVI հատ., եջ 463.

Բայց հարկավոր եր վոչ միայն գործարկել այդ կայանները, հարկավոր եր վոչ միայն շինել այն ձեռնարկությունները, վոր յես թվեցի այստեղ, այլև շատ ավելին—հարկավոր եր այն բարձր տեխնիկան, վոր մենք ներմուծեցինք Յեվրոպայից և Ամերիկայից, ծառայեցնել մեր պետությանը: Ընկ. Ստալինն այնցյալ տառելի, տնտեսավարների խորհրդակցությունում, կտրուկ կերպով դրեց տեխնիկային տիրապետելու հարցը: Յեվ. իրոք, ի՞նչ ոգուտ յեթե վիթխարի գործարաններ, վիթխարի ելեկտրոկայաններ շինենք, իսկ հետո չկարողանանք դործի դցել: Դուք բոլորդ շատ լավ հիշում եք, ինչպես մենք ուրախանում եյին Ստալինգրադի գործարանի գործարկումով, և ինչքան ամենահամառ աշխատանք պահանջեց Ստալինգրադի գործարանը, մինչև մենք նրան վոտքի կանգնեցրինք: Ամերիկական բարձր տեխնիկայի գործածությունը մեկ անգամից չեր, վոր մեզ հաջողվեց:

Գերմանական սոցիալ-դեմոկրատիայի որդան «Փորպերտ» թերթը շատ անդամ և արտահայտել իր ուրախությունը, վոր բայլշեիկներին չի հաջողվի դուստ բների ամերիկական նոր տեխնիկայով զինված գործարանը: Գերմանական մենչելիների որդանը չարախնդում եր, վոր թեպետ և այն քաղաքը, ուր կառուցվում ե այն վիթխարի գործարանը, կոչվում ե Ստալինի՝ այդ սովորատայա մարզու անունով, սակայն միմիայն պողպատյա կամքով չի կարելի նվաճել այդ բարձր տեխնիկան: Բայց բայլշեիկների կամքը, բանվորների կամքը տիրաբար իրեն յենթարկեց այդ դիզանուր և նրան ստիպում ե ծառայել սոցիալիստի գործին, որպահն հարցուրից ավելի արակտոր բաց թողնելով կոլտնտեսական գաշտերին:

Մեծ ջանքերով, մեծ լարվածությամբ բանվորների յերիտասարդ կազրերը, յերիտասարդ ինժեներները և հին փորձի տեր ինժեներները գործի անցան Խորհրդային իշխանության նիստամամբ ունեցած իրենց ամբողջ նվիրվածությամբ, և ներկայում դորձարանն ամբողջապես մեր ձեռքումն ե գտնվում: Գործարանն անցյալ տարվա հունվարի 30-ին տվել ե 37 տրակտոր, իսկ 1932 թ. հունվարի 30-ին կոնվեյերից իջեցրեց 130 տրակտոր: (Ծափակարությունների):

Ընկ. Պտուխան ինձ հենց նոր հաղորդեց, վոր ներկայումս գործարանում վեճ ե գնում այն մասին, թե որական 144 մեքենայի նախագծային կարողությունը սահմանագիծ է արդյոք: Յեթե մենք ներկայումս ունենք որական 130 մեքենա, ապա կասկած չկա, վոր վոչ ուշ, քան մարտի վերջին կամ ապրիլի սկզբին կունենանք որական 144 մեքենա:

Յես համաձայն եմ Ստալինգրադի գործարանի այն ընկերների հետ, վորոնք գտնում են, վոր 144-ը սահմանագիծ չե: Յես համատացած եմ, վոր Ստալինգրադի գործարանի ինժեներներն ու տեխնիկները մեկ անդամ ել կապացուցեն մեր թշնամիներին, վոր նրանք վոչ միայն տիրապետել են գործարանին, վոչ միայն աըգի են նախագծամբ ամբողջ կարողությունը, այլև կոնվեյերից կիջեցնեն որական 200 տրակտոր (Ծափակարությունների):

Յերկար կանգ չեմ առնի մյուս գործարանների վրա, ուր նույն պես մեզ գժվար եր տիրապետել տեխնիկային. կանգ կառնեմ միայն ածխարքյունարերության վրա: Դուք կհիշեք, վոր 1930 թ. խոստ ընկապ ածխահանումը բոլոր ածխային ուսուներում ե, հատկապես, Դոնբասում, ուր հանուլիթը 1930 թ. հունիսուստոս ամիսներին ընկապ մինչև որական 70-75 հազար տոննի: 70-75, 80-100 հազար տոննով հնուռ չես զնա: Այդպիսի պատվանդանի վրա վոչ մի հզոր մետալուրգիա չես կառուցի: 1930 թ. աշնան ուր կերպով դրվեց ածխահանման մեքենայցման հարցը: Ամբողջ 1931 թ. ընթացքում մենք պայքարեցինք այդ հարցի համար: Ամբողջ կուսակցությունը, Կենտրոնական կամխտեն, հատկապես Ռևկրայնայի կե և մասնավորապես ընկ. Կոստիորը, վոր հանքահորերից դուրս չեր գալիս, պայքարում եյին մեքենայցման հարցը լուծելու համար: Առաջ եյինք շարժվում շատ զանգաղ, բայց վերջիվերջո աեզաշարժը կատարվեց: Այնուղի, ուր անցյալ տարի ունեյինք որական 100,000 տոնն հանուլիթ, այս տարի սունենք 140-144 հազար տոնն: Այդ անողայիման նվաճում ե, այդ անապայման խսոսում ե այն վասին, վոր մենք սովորել ենք կառավարել մեխանիզմները: Բայց հարկայոր ե ուղղակի ասել, վոր այդ ես ամենեին բավարար չե: Նույն մեխանիզմներով և նույն բանակության բանվորական ուժով մենք պետք ե շատ ավելի ածուխ ստանանք, քան ստանում ենք այսոր: Այստեղ բան գուրս չի գտայն խսակցություններից, թե այսինչը չտվին, այնինչը չտվին: Ածխի բոլոր ավագաններում մենք այժմ նյութական և տեխնիկական հարաբերություն ունենք յերկրին տալու ավելի շատ ածուխ, բայց տրվում ե այսոր: Մետալուրգիան, տրամադորաւը, ընդհանրապես մեր վողջ տնտեսությունը այլիս չեն կարող միալ վառելանյութի այս վախտ որապահիկով: Վառելանյութը պետք ե լինի գործարանի մոտ, չողեշարժի մոտ, վառելանյութը պետք ե լինի ամեն տեղ, վորպեսզի մարդիկ կարողանան հանդիսատ աշխատել: Ածխի աշխատառղներից ե ամբողջապես կախված, թե ինչքան չուտ մենք այդ գործը վոտքի կանգնացնենք:

**Ստալինդրադի** տրակտորի գործարանի դասերը, ածխարդյունաբերության դասերը մեր յերկրի համար զուր չանցան։ Հաջորդ տրակտորի գործարանը Խարկովին է, նա արդեն չի անցնում մանկական հիմանդրությունների յերկարատև ստագիան։ Նա գործարկման պահից անմիջապես քայլեց բավական սահուն և այժմ տալիս ե որական 50 տրակտոր։ Որական 50 տրակտոր տալու համար Ստալինդրադի գործարանին հարկավոր յեղավ 10 ամիս, իսկ Խարկովի գործարանին՝ ընդամենը 4 ամիս։ Այդ արդեն այնքան եք սարսափելի չե։ Յես կարծում եմ, վոր խարկովցիները հուպ կտան և շուտով մշցման կելնեն Ստալինդրադի գործարանի հետ։

**ԿՈՍԻՈՐ**։ Մետաղ և հարկավոր մետաղը չի բավականացնում։

**ՈՐՉՈՒԻԿԻՉԵՑ**։ Մետաղը չի բավարարում, ընկ. կոսիոր։ Մետաղը նույնպես գտնվում է այն ռայոնում, ուր գտնվում է Խարկովի տրակտորի գործարանը (ծիծաղ)։ Յեվ յեթե մենք սովորենք հարկ յեղածին պես աշխատել մեր մետաղուրդիական գործարաններում, վոչ մի հիմունք չկա, վոր մեր շինած՝ Խարկովի տրակտորի գործարանը մետաղի պակասության պատճառով չի կարողանա ոգտագործել իր ամբողջ կարողությունը։

**ԿԱՍԻՈՐ**։ Ճիշտ է։

**ՈՐՉՈՒԻԿԻՉԵՑ**։ Մետաղի մասին յես առանձին կիսունեմ, ուստի այստեղ բավականանում եմ միայն այս դիտողությամբ։

**ԱՄՈ** գործարանը թեև քիչ դանդաղ է ընթանում, բայց և այնպես նա յերեկ բաց թողեց 48 մեքենա։ Ընկ. Լիխաչյովը հույսի, վոր նա յետ չի մնա մյուս գործարաններից։ Այսոր մենք հազորդագրություն ունենք այն մասին, վոր Նիժնի-Նովգորոդի գործարանն արդեն բաց է թողել առաջին տասնյակ մեքենան։ Նա այս միսը պետք է տա 25 մեքենա։ Այս դեռ միայն առաջին փորձն է այս դեռ աշխատանքի նախապատրաստությունն է։ 25 մեքենա այնպիսի գործարանի համար, վորը սարքավորված է բաց թողելու որական 150-200 մեքենա, պատուարկ բան է։ Գործարանը միայն այսոր է սկսում աշխատել, և այն փաստը, վոր նա արդեն բաց է թողել իր մեքենաները, ինչպես նաև այն տեղեկությունները, վոր յես ունեմ այդ գործարանի մասին։ Գալիս են ասելու, վոր այս գործարանը ևս իր արտադրությունը կծավալի առանց մանկական հիմանդրությունների յերկարատե շրջանի։

Այսպիսով 1931 թ. մենք գործարան-դիգանուներ գործարկելու և այստեղ արտադրությունը ծավալելու վորոշ փորձ կուտակեցինք։

1932 թ. մենք գործարկելու յենք շատ ավելի մեծ քանակությամբ գիգանտ գործարաններ և ընդհանրապես նոր ձեռնարկություններ, վորոնք զինված են բարձր տեխնիկայով։ Մենք հավատացած ենք, վոր 1931 թ. գործը զգալի չափով կհեշտացնի այդ գործարաններում արտադրությունն արագ ծավալելու գործը։ Համեմայն զեսպ այժմ արդեն վոչ չի համարձակվի կասկածել, վոր բայլը կիները նորագույն տեխնիկան կծառայեցնեն սոցիալիզմին։

Յես չեմ կամենում կուսակցական կոնֆերանսի ամբիոնից ամաչեցնել նրանց, վորոնք Ստալինդրադի գործարանի մասին զրում եյին, վոր բան դուրս չի գա, վոր մենք ամերիկական մեքենաների հետ «ռուսակարի» յենք վարվում, և վոր մեզ մոտ այդ գործը գլուխ չի գա առանց ամերիկական ոգնության։ Հասկանալի յե, վոր ամերիկական ոգնությունը լավ բան է, բայց համեմայն գեղս փաստը մնում է փաստ։ Մեր «ռուսակարի» բանվորներով, ինժիներներով և տեխնիկներով մենք Ստալինդրադի և Խարկովի գործարաններում ամերիկական տեխնիկան սկսեցինք ծառայեցնել մեր կոլեկտիվացմանը, մեր յերկրին (ծափահարություններ)։

Նույնը պետք է ասել նաև ելեկտրոկայանների վերաբերմաժբ, վորոնց մասին յես խոսեցի։ Իհարկե, այնքան ել հեշտ չեր այդ կայանները կառուցել և սարքավորել։ Բայց այդ մեխանիզմներին տիրապետելը շատ ամելի գժվար եր։ Դուք հաճախ կարդում եք Նիժնի-Նովգորոդի կայանի Շտերովյան կայանի մասին, ինչքան խափանումներ, ինչքան սկանդալներ են լինում այնտեղ։ Բայց համեմայն գեղս, արտաքին թե այնպես, որ որի վրա մենք այս Փրոնտում ես ամրանում ենք, —այդ փաստ է։

**ՆՈՐ ԱՐՏԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՅԵՎ ՆՈՐ ՃՅՈՒՂԵՐ**

Բնկերներ, նոր ձեռնարկություններ կատարեցելուն և այնանց աելինիկային տիրապետելուն զուգընթաց, հարկավոր յեղավ, վոր մենք գործող գործարաններից շատերում մեկ կողմ թողնենք կարգի բերված արտադրությունը և անցնենք արտադրության նոր տեսակների։

Գյուղատնտեսության կոլեկտիվացումը, խոշոր սոցիալիստական հողագործության անցնելը պահանջում եյին բարձր տեխնիկական բազա։ Մենք ավելի արտակտորներ, բայց տրակտորը պահանջում եր բոլորովին այլ ինվենտար, քան այն, ինչ մենք արտադրում եյինք առաջ։ Ընկ. Յակովը համառորեն պահանջում

եր այդ ինվենտարը, և արդյունաբերությունը պետք է ամենակարծ ժամանակամիջոցով տար այն, չնայած բոլոր դժվարություններին: Կարծ ժամանակամիջոցում դյուղատնտեսական մեքենաներինը վերակառուցվեց և ցանքսերի կամպանիային արդեն կարողացավ մատակարարել վոչ-փոքր քանակությամբ տրակուֆ բային ինվենտար:

Գյուղատնտեսական մեքենաշինության հնդամյա պլանի համաձայն մենք 5 տարում պետք եւ տայինք 1,860 միլ. ոռւբլու արտադրանք, վորից 286 միլ. ոռւբլու տրակտորային ինվենտար: 3 տարում փաստորեն տվյալը 1,025 միլ. ոռւբլու արտադրանք, վորից 378 միլ. ոռւբլու տրակտորային ինվենտար: Ամբողջ հնդամյակի համար նախատեսված տրակտորային ինվենտարի արտադրանքի ծավալը 3 տարում գերակատարված է 32%-ով: 4 տարում, ներառյալ 1932 թ. պլանը, գյուղատնտեսական մեքենաշինությունը կտա 1970 միլ. ոռւբլու արտադրանք, վորից 1,058 միլ. ոռւբլու տրակտորային ինվենտար, այսինքն՝ 3½-4 անդամով ամելի, քան 5 տարվա համար նախատեսված ընդհանուր գումարը: Հստ հնդամյա պլանի, տրակտորային ինվենտարը 1932/33 թ. պետք եւ կազմելը վողջ գյուղատնտեսական մեքենաշինության արտադրանքի 25 %-ը: Փաստորեն տրակտորային ինվենտարը կազմում եր-1928-29 թ.՝ ամբողջ գյուղատնտեսական մեքենաշինության արտադրանքի 4,4 %-ը, 1929-30 թ.՝ 21 %-ը, 1931 թ.՝ 61 %-ը և 1932 թ.՝ 76 %-ը:

Ի՞նչ կատարվեց այս ճյուղում: Մենք բնալ չենք արտադրել, տրակտորային գութաններ, տրատորային շարքացաններ, կոմբայններ, վուշ զղող մեքենաներ, բամբակահավաք մեքենաներ, կարտոֆիլ տնկող և կարտոֆիլ քանդող մեքենաներ, վինդրոուերներ և այլն, և այլն: Մեր գործարանները վոչ միայն չղիտեյին այս արտադրությունները, այլև տարեսկզբին մենք չունեյինք անդամ մի շարք մեքենաների նմուշներ: Հարկավոր եր գտնել այդ նմուշները, հարկավոր եր հանել նրանց նախագծերը, հարկավոր եր տնայնագործական յեղանակով չինել առաջին նմուշները, ապա անցնել նրանց մասսայական արտադրությանը: Ցանքսի կամպանիայի ժամանակ և ամբողջ 1931 թ. ընթացքում մենք տվինք 82,000 տրակտորային շարքացան, 77,000 տրակտորային կալսիչ, 21,000 տրակտորային խոտհունձ մեքենա, 14,700 խուրձկապներ, 3,500 կոմբայն, 930 վինդրոուեր, 592 ջոկիչ մեքենա, 1667 բամբակահավաք մեքենա, 3600 տրակտորային ճակնդեղահան մեքենա, 16,500 տրակտորային սայլակ, 66 հաղար տրակտորային կցորդ-

ժամեր, 2500 կարտոֆիլ տնկող մեքենա, 11,000 կարտոֆիլ քամուղ ձիաքարշ մեքենա, 196 յեկիպտացորենի պիկերներ, 336 պարտատանյութ ցրող մեքենա, 402 հացահատիկի ելեվատոր, 1,547 կերախաչ մեքենա, 21,000 բամբակի շարքացան, 4827 տրակտորացին կուլտիվատոր շարամեջ մշակույթների համար, 7000 վուշ գողող մեքենա, 3399 վուշ քրիպուլ մեքենա № 5 և 7, 1940 մեքենա (գեկորդիկատորներ, չվիճակտուրիներ), թեզան մաքրող մեքենաներ) վուշի և այլն թելատունների սկզբնական մշակման համար: Այս բոլոր մեքենաններն առաջ կամ չելին արտադրվում մեզ մտա, կամ արտադրվում ելին շատ սահմանափակ քանակությամբ:

Բեռնաշրջանառության հսկայական աճումը պահանջում եր նոր շարժական կազմ: Այն, ինչ կար առաջ, ներկայում մեզ վոչ մի չափով չի բավարարում: Յեկ իրոք, կատարյալ բարբարություն ե, յերբ հանքանյութը փոխադրում են փակ վագոններով: Հարկավոր եր կազմակերպել բաց և մեծ պլատֆորմների արտադրությունը: Հարկավոր եր գորոնել նոր, ուժեղ շոգեշարժներ: 1931 թ. սահմանափակ չափով ձեռնարկվեց այդ գործը: Վորոշան մենք տվյալը, որինակ՝ քառասունակ ցիստերն տվինք 3,488 հատ, իսկ 1930 թ. տրված եր 676 հատ, մեծատար պլատֆորմներ՝ 4,556 հատ, 1930 թ. կար 942 հատ:

Ելեկտրիֆիկացիայի զարգացումը մեղնից պահանջում եր, զոր մենք նրա համար ստեղծելինք սեփական ուժեղ մեքենաշինական բաղադրամական արտադրությունը: Այս գործը ևս առաջ շարժվեց: 24,000 կլվ. կարողությամբ տուրբովեներատոր եր շինված մեզ մոտ 1930 թ., իսկ 1931 թ. վերջերքին բաց թողնվեց 50,000 կլվ. կարողությամբ տուրբովեներատոր, զոր գործում եւ կաշիրի կայանում: Զենոնարկված ե 7մետրոստրոյի համար շինելու 62,000 ձիու ուժի տուրբիններ: Վոչ միայն ցարական Ռուսաստանում, այլև հոկտեմբերյան հեղափոխությունից հետո, մինչեւ 1924 թվականը, տուրբովեներատորներ և հիգրոպեներատորներ չելին շինված: Բաց եթողնված ելեկտրոսարքավորում ուժեղ բլյումինդի համար:

Ելեկտրոսարքավորում ածխարդյունաբերության մեքենայացման և ելեկտրիֆիկացիայի համար (մոտորներ փորիչ մեքենաների համար, լերյողկանների համար և այլն):

30 կիլովատանոց փորիչ մոտորներ նավթարդյունաբերության համար:

Ասինխրոնային մոտորներ (1,000 կլվ., 125 պառլյուտ) և մոտորդիներատորներ (2,500 կլվ.) մամլիչ դադդյաների համար:

Մինչև 20,000 կելովատանոց արանսֆորմատոներ :

Յուղային ընդհատիչներ 115·000 վոլտ լարվածության և պայթուցիկ կարողության համար մեկ ու կես միլիոն կելովատ-ամպեր (կվա) :

1931 թ. 2-րդ յեռամսյակում բաց և թողնված ստորերկրյագարել 120,000 վոլտի, իսկ 1931 թվի վերջում 220·000 վոլտի ստորերկրյա կարելի նմուշներ (այժմ փորձվում ե) և 380,000 վոլտի լերկ կարելի փորձնական ծայր : Ստորերկրյա կարելի ամենաբարձր լարվածությունը, վոր շահագործման մեջ և Գերմանիայում, հասնում է ընդամենը 100,000 վոլտի, իսկ Ամերիկայում՝ 132,000 վոլտի, այժմ փորձարկվում է 220·000 վոլտը : Լերկ կարել, վոր շահագործման մեջ և Յեվրոպայում և Ամերիկայում 220,000 վոլտի լարվածություն ունի :

Նույնը, ընկերներ, «Կոոլոստուրբինի» գծով : 1913 թ. ցարական Ծուռաստանում արտադրվում եր 30·000 քառ. մետր կաթսա, 1930 թ.՝ 138,000 քառ. մ. և 1931 թ.՝ 207,000 քառ. մ. : 1907-ից մինչև 1916 թվականը բաց և թողնված յեղել ընդամենը 24,000 հատ տուրբին, 8000 կվ. ընդհանուր կարողությամբ, 1930 թ. բաց թողնվեց 283,000 հ. : 1931 թ.՝ 753,000 հ. : Ստալինի անվան գործարանում կաղմակերպված ե 24 հազարանոց և 50-հազարանոց տուրբինների արտադրությունը : Նախագծված ե 25 հազար կիլովատանոց տեսլովի ինքնաշխատ տուրբին, 1932 թ. բաց և թողնվելու 8 հատ : Չեռնարկված ե 1·500 և 2·500 քառ. մետրանոց կաթսաների պատրաստմանը :

Մետալուրգիայի լեռնարդյունաբերության, ածխի, նալրի, պարարտացման արքայի որումները մինչև 1930 թվականն ընդհանրապես չեյին արտադրվում, 1930 թվին արտադրվեց 10 միլիոնի, 1931 թ.՝ 50 միլիոնի :

Առաջին անգամը լինելով, 1931 թ. ԽԺԷի գործարանում չինվեց 2 բլյումինգ : Մեղ մոտ շնչարձ ե 4 կաղապարող մեքենա : Առաջին անգամը լինելով՝ սկսված ե կրեկինգաների, տրուբչատկաների, պարարտացման և դանագան այլ սարքավորումների արտադրությունը :

Կաղմակերպված ե բոլորովին նոր նյութ, վոր առաջ մեզ մոտ գրեթե չկար-ավտո-տրակտորային մեքենաշինությունը : 1931 թ. մենք բաց թողինք 40,000 տրակտոր, 1930 թ.՝ 12,727 տրակտոր : Զիու ուժով վերցրած՝ 1931 թ.՝ 550,000 ձիու ուժի, 1930 թ.՝ 123,000 ձիու ուժի : Ավտո-մեքենաներ 1931 թ.՝ 20,500 հատ, 1930 թ.՝ 8,500 հատ :

Հարկավոր եր կաղմակերպել սեփական դազզյահինությունը, վորովհետև առանց դրանց ստիպված կլինելինք չարունակ կախումն ունենալ իմպորտային դազզյահներից : Այս գործը հին, նախահեղափոխական Ծուռաստանում ամենասաղմնային վիճակում եր գանվում :

1913 թ. գաղգրահների ամբողջ արտադրությունը գնահատվում եր 3,3 միլ. ո. : 1928/29 թ. բաց և թողնված 8,5 միլ. սուբլուգագյահ : 1931 թ. գաղգրահի արտադրանքն ամբողջ Միությունում կազմում ե 55 միլ. ո., վոր նախապատերազմյանից գերազանցում ե 15 անգամով : Դազզյահների թվով վերցրած 1931 թ. արտադրանքը կազմում է 16,000 հատ, 1930 թ.՝ 7,000-ի դիմաց : 1931 թ. Միության մեջ բաց և թողնված զանազան մետաղահատիչ գաղգրահների մոտ 40 մոդել :

1931 թ. վերջերքին ավարտվեցին շինարարական աշխատանքները Մոսկվայի ունկուրվերային գաղգրահների գործարանում (26,2 միլ. ո. արժողությամբ, յերկու հերթի աշխատանքով. տալու յի 6,200 ունկուրվերային գաղգրահներ և կիսավլումաներ ավելի կատարյալ կոնսորտուզիայի) և Նիժնի-Նովգորոդի Փրեգերային գաղգրահների գործարանում (30 միլ. ո. արժողությամբ, յերկու հերթի աշխատանքով տալու յի 12,500 Փրեգերային գաղգրահ) :

2 նոր գործարան արժեն 56 միլ. ո., իսկ գաղգրահաղործական միավորման 1931 թ. գործող ամբողջ հիմնական կապիտալը 26 միլ. սուբլի յի, այսինքն՝ մեկ տարում հիմնական կապիտալը յեռապատկվում ե, նաև յեռապատկվում է արտադրական կարությունը՝ 9,000 գաղգրահ 1931 թ. և 28,000 գաղգրահ յերկու գործարանների հետ միասին :

1932 թ. սերիային արտադրության են տրվելու ժամանակակից կոնստրուկցիա ունեցող բարձրորակ դազզյահների մոտ 15 մոդել :

Նույնպիսի տեմպերով ընթացավ սեփական գործիքների արտադրություն կաղմակերպելու գործը : Այս գործը հնում նույնպես դրված եր աննշան չափով : Ընդամենը 1930 թ. արտադրված ե 131 միլ. ո. գործիք, 1931 թ.՝ 171 միլ. սուբլու. աճում 30 տոկոսով :

Վորակավոր հատիչ և կոնստրուկտափիչ գործիքներ (Փրեզներ, զանազան տեսակի բուրդուներ, մետրական պատուահաններ (մետչիկ) Յոհանսենի սալիկներ, միկրոմետրներ և այլն) մինչև 1931 թվականը Միությունում բոլորովին չեյին արտադրվում կամ արտադրվում ելին չնչին քանակությամբ :

1931 թվի ընթացքում հիմնվեցին հետեւյալ նոր արտադրությունները՝ Յոհանսենի Յոհանսենի սալիկներ, քանդակման միկրոմետրներ,

քանդակաչափեր (резьбомеры) մետրական պտութահատները՝ արագ կտրող՝ պողպատից շինված շաղափներ և կոնտրոլչափեր՝ գործիքների զանազան տեսակներ :

Գործիքների կարելորագույն տեսակների արտադրությունը  
1930 յնք 1931 թվերին

(Հ ա դ ա բ հ ա տ ե ր ո ւ գ)

1930 թ. 1931 թ. %

Շաղափներ . . . . .	4300	9040	205
Պառատահատներ . . . . .	461	800	175
Կլոր պարուրահատներ . . . . .	121	250	207
Ֆրեզներ . . . . .	39	44	113
Միկրոմետրներ . . . . .	15	39	260
Բալրուտներ . . . . .	577	813	141
Շտանգելներ . . . . .	80	113	140
Կոնտրոլչափեր . . . . .	40	88	220

Հատող և չափող գործիքների այս բոլոր վորակալոր տեսակները 1930 թ. տրված են 15,9 միլ. ոռորդու, իսկ 1931 թ.՝ 31,7 միլ. ո., այսինքն աճում 100 տոկոսով, բոլոր գործիքների ընդհանուր աճումը՝ 30 % :

1932 թ. շահագործման ե դրվելու «Ֆրեզեր» և «Կալիբր» գործիքներ շինող գործարաններ, 110 միլ. ոռորդու գործիքի արտադրական կարողությամբ: Այսպիսով, այդտեղ ևս մենք կանգնում ենք մեր սեփական վոտքերի վրա:

Սկսել ե ծավալվել ֆիմիական մեքենաշինությունը: Դրված են Միության համար նոր սարքավորումներ—սաոցարաններ, վակուում-չորանոցներ, դաշտուրեներ, ցենտրոֆուզաներ և այլն: Քիմիական արդյունաբերության ներկայումս կառուցվող մի շարք խոշոր ճենարկություններում (Դորոգոմիլովի, Զերնորեզենսկի, Վուկրեսենսկի, Բորբիկի, Բերեզիկի կոմբինատ) խորհրդային սարքավորումը մեծ տեղ ե գրավում:

Խորհրդային մեքենաշինության դեմքը հնդամյակի տարիներում, հատկապես 1931 թ., խիստ փոխվել է: Յեթե 1930 թ. նոր արտադրությունները՝ վորոնք առաջին անգամ կաղմակերպվեցին հնդամյակի անցած տարիներում, կազմում ելին միայն 90 %, ապա 1931 թ. նրանք ընդուրկում են մեքենաշինության ամբաղջ արտադրանքի 25%-ը (1,211 միլ. ո., 4,730 միլ. ոռորդու): Ինչպես ասացի, նրանց խոշոր մասը կաղմակերպված է 1931 թ.:

Նոր մեքենաները պահանջում ելին նաև համապատասխան մետաղ-վորակավոր պողպատ: 1930 թ. արտադրված է 65,000 տոնն, 1931 թ.՝ 200,000 տոնն: Վորակավոր պողպատների մետալուրգիան խոշոր վաստյուն է գործելու 1932 թ. (660,000 տոնն),

Արտադրության մեջ յուրացված են վորակավոր ու բարձրարակ պողպատի մի շարք տեսակներ:

Արագ կտրող պողպատ—«Ելեկտրոստալ» 1931 թ.—3.200 տոնն:

Երոմանիկելային պողպատ—«Ելեկտրոստալ» 1931 թ. գրեթե 5000 տոնն:

Գնդակավոր հենական (шարկոպօճառիկով) պողպատ—«Ելեկտրոստալ» և Զլատոսուստովսկի գործարան:

Ավտո-տրակտորային պողպատ—«Սերպ ի Մոլոտ», «Կրասնի Ռեզյարք», «Կրասնի Պուտիլովեց», Մարիուպոլի գործարան:

Ավտո-զսպանակային պողպատ—Զլատոսուստովսկի գործարան:

Զժանդուող պողպատ—Զլատոսուստովսկի և Լիսիլենակի գործարաններ, «Ելեկտրոստալ», Իժեվսկի գործարան:

Ածխածնային պողպատ գործիքների համար—Զլատոսուստովսկի գործարան:

Դիմամոյի և տրանսֆորմատորի յերկաթ—վերխիսեսկավի գործարան, 1931 թ.՝ 24.000 տոնն:

Գատֆիլդի պողպատ—«Սերպ ի Մոլոտ» սչաքների, կրեստավինաների, դրագների մասերի, հողահան մեքենաների, քար ջարշող մեքենաների փակիչների, կաղապարող մեքենաների համար:

Վորակավոր պողպատալար—«Սերպ ի Մոլոտ»:

Ֆերրո-ձուլվածքներ (Փերրո-սիլիկոն, Փերրո-իդում)՝ Զելարինսկի Փերրո-ձուլվածքների գործարան, 1931 թ.՝ 5000 տոնն, 1932 թ.՝ 16.500 տոնն:

## ՆՈՐ ԿԱՐԴԻԵՐ

Նոր արտադրությունների կաղմակերպումը և նոր տեխնիկայի յուրացման խնդիրները պահանջում են տեխնիկական կաղըելի ուժեղ պատրաստում համապատասխան չափերով:

Մենք ամենից ավելի աղքատ ենք կաղըերով: Նոր գործարկող ձեռնարկությունների յուրացման խնդրում մեր աղքած դըժվարություններն ամենից առաջ ենք կաղըերի պակասության: Մենք ստիլված ենք կաղըեր պատրաստել աշխատանքի ընթացքում: Կաղըերի պատրաստությունը ծավալվում է լայն չափով: 1932 թ. հունվարի 1-ին ՀՀ կառավագանքում դաշնակույթի համար մեքենաներում, տեխնիկական մեքենաներում սովորում ենք 370.000 հոդի, Փաթործություններում՝ 626.000 հոդի և մասցած ամեն տեսակ

դասընթացներում՝ 700—800 հազար հոգի։ Միայն ԺՏԳԽ-ի սխալում սովորում է 1.800.000-ից ավելի մարդ։

1931 թ. ավարտեցին 21.000 յերիտասարդ ինժեներ ու տեխնիկ, 1932 թ. ավարտելու յեն 38.000 հոգի, 1933 թ.՝ 87.000 հոգի։ Ֆարգործումները 1931 թ. տվել են 51.000 հոգի, 1932 թ. տալու յեն 350.000 հ.։ Այս նոր կաղըբերը, վորոնք թվով արագ աճում են, կոչիվելով նոր տեխնիկայի տիրապետման համար մշվող պայքարում, կարևորագույն պայմանն են սոցիալական արդյունաբերության հետագա ծավալման համար։

Արդյունաբերության գիտա-հետազոտական հաստատություններն անցած տարի 141-ից բարձրացան 255 միավորի։ Գիտական աշխատողների թիվը 6.000-ից հասավ 12.500-ի։ Այնուամենայիշ գիտա-հետազոտական հաստատությունների կավաց արդյունաբերության գործնական իննդիվների հետ չսփառաց անբավար ե, թեև 1931 թ. վորոշ առաջադիմություն ե կատարված։ Շատ հաճախ մեծ քանակությամբ գիտականներ, տեխնիկներ և ինժեներներ նստում են գիտա-հետազոտական ինստիտուտներում, շատ հաճախ ուղարկար աշխատանք են կատարում, բայց պետք ե ուղղակի ասել, վոր նրանք գործարաններից դեռևս հետու յեն։ Վորոշ շրջադարձ, անկասիած, կա, բայց նա բավարար չե։

Պրոֆեսորներից մեկը, ընկի. Կուշկեխը, Քիմիական արդյունաբերության խորհրդում միանդամայն ճիշտ եր ասում, վոր «Ժամանակն ե քանդել մեր ինստիտուտների վանական պատերը և գիտական աշխատողներին նետել ուեալ կյանքի մեջ»։ «Լարորատորիաների և ինստիտուտների վանական պատերից դեպի գործարաններ, —աւագ թե ինչը պետք ե լոգունդ զայնա ԽՍՀՄ-ի գիտահետազոտական ինստիտուտների աշխատանքում»—պրոֆ. Կուշկեխը այս լոգունդը հանդիպեց բավական ուժեղ առարկությունների՝ վորոշի վորոշ մասի կողմից։ Առանձին պրոֆեսորներ մատնանշում ելին այն, վոր դրա հետևանքով գիտությունը հանկարծ կարող ե յետ մնալ։ Պրոֆ. Կուշկեխը իրավացի յե։ գիտությունը ինստիտուտների «վանական» պատերից պետք ե դուրս դա գործարանները։ Վորովհետեւ, յեթե գիտությունն իր աշխատանքով բեղմնավորի մեր գործարանները, նա ավելի մեծ արդյունքներ կտա և ինքը վոչ միայն յետ չի մնա, այլ արագ առաջ կդնա։

## ԲԱՆՎՈՐ ԴԱՍԿԱՐԳԻ ԴՐԱԽԹՅԱՆ ԲԱՐԵԼԱՎՈՒՄԸ

Մեր արդյունաբերության աճման հետ միասին աճում ե ամբանում և սոցիալիստական արդյունաբերության մեջ աշխատողների բանակը։ Բանվորների և ծառայողների թիվը վողջ արդյունաբերության և շինարարության գծով 1931 թ. ավելացավ 2 միլիոն հոգով, բանվորների թիվը ԺՏԳԽ-ի արդյունաբերության գծով, առանց աշակերտների և կրտսեր անձնակազմի, 445.000 հոգով։ Միայն ծանր արդյունաբերության մեջ զբաղված կանանց թիվը 1930 թ. 111.000-ից 1931 թ. հասավ 212.000 հոգու։

1931 թ. վերջին 7-ժամյա բանվորական որվայ յե անցել ամբողջ բանվորության 83 %-ը։ Ամբողջապես անցել են սկ մետաղուրդիայի, հիմնական քիմիայի և ուղինի արդյունաբերության մեջ զբաղված բանվորները, գրեթե ամբողջապես (90—98%)—ելեկտրոպարգյունաբերության, նավթի, թղթագործական, աերացի և գունագոր մետաղուրդիայի գծով աշխատող բանվորները։

Աշխատավարձ ԺՏԳԽ-ի արդյունաբերության գծով 1931 թ. ավելացավ 11 ամսում միջին հաշվով 16%։ Զպետք և մոռանալ, վոր հասարակահացված աշխատավարձը—սոցազ, կուլտուրական սպասարկում, ակումբներ, բնակարաններ, կուրորտներ, բանվորական կենցաղի բարելավման ֆոնդեր, Փարզործումների աշխերանների թուշակներ—1931 թ. կազմում ե ստացված աշխատավարձի միջին հաշվով 36 %-ը, 1930 թ. 34%-ի դիմաց։

Աշխատավարձի բնագավառում մեզ մոտ յեղել ե և այսու ել մուռում ե մի հոկայական թերություն—դա չարաբաստիկ հավասարեցումն է։ Մի ժամանակ մեր խելքին փչեց մետաղուրդիան աշխատավարձի մակարդակի տեսակետից զնել 11-րդ տեղը, ածխարժակարձի մակարդակի տեսակետից զնել 27-րդ տեղը, իսկ թեթև արդյունաբերությունը 19-րդ, կոքսը՝ 27-րդ տեղը, իսկ թեթև արդյունաբերության և այլ բնագավառների բանվորներին՝ առաջին տեղը։ Ինչքան ել այլ անախորժ լինի, բայց յես կրերեմ մի տեղեկանք։ Բանից դուրս ե գալիս, վոր 1913 թ. քարածխի արդյունաբերության բանվորը 89 %-ով ավելի յեր ստանում, քան մանածագործը, իսկ մեր խելքին փչեց այնպես կառուցել մեր տարիքային քաղաքականությունը, վոր 1924 թ. ածխահատը մանածագործից 3%-ով պակաս եր ստանում, 1928-29 թ. միայն 6 %-ով ավելի և 1931 թ. 37 %-ով ավելի։ 1932 թ. համար սահմանված ե 58%-ով ավելի։ Արդպիսի ինյատառակ վիճակի մեջ եր սկ մետաղուրդիայի բանվորների աշխատավարձը։ Ահա թե ինչպիսին եր մեր արդիքային քաղաքականությունն անցյալ տարիներում։ Հարկավոր ե,

վոր մենք չուտով վերջ տանք այս ամենին ին վոշ-բալզակյան տարի Փային քաղաքականությանը : Այսպիսի բնույթի հավասարեցումը բայց իդիոմի հետ վոչինչ չունի ընդհանուր : Յեզ իրոք, մեզ մոտ ո՞վ կաշխատի մետալուրգիայի, հանգառորդի ծանր աշխատանքներում, յեթե նրա աշխատանքն ավելի քիչ վարձատրվի, քան մյուս ճյուղերի ավելի հեշտ աշխատանքներում : Այդեղ ե հոսունության պատճառներից մեկը : Մենք ձևուամուխ ենք յեղել այդ ուղղերու . 1931 թ. հոկտեմբերից ածխահաների աշխատավարձն ավելացվեց 27%-ով, մետալուրգիայի բանվորներինը՝ 22%-ով, կոքսի և հանգանյութի արդյունարերություն՝ 20%-ով :

Այս հետ միաժամանակ անընդհատ ավելացել ե բնակարանային տարածությունը : Բնակչինարարության ներդրումները ԽՍՀՄ ժամանակակից արդյունաբերության գծով տարեցտարի ավելանում են : Վերջերս Սարսովիչը դաստիարկություններ եր դուրս տալիս, թե մեզ մոտ բանվորական բնակչինարարությանը հարկ յեղած ուշագրությունը չի դարձվում, և բնակարանային տարածությունը շարունակ նվազում է : 1925 թ. բնակչինարարության մեջ ներդրվել է 63 միլ., 1926 թ.՝ 94 միլ., 1927 թ.՝ 118 միլ., 1928 թ.՝ 140 միլ., 1929 թ.՝ 175 միլ., 1930 թ.՝ 300 միլ., 1931 թ.՝ 575 միլ. : ԺՏԿ-ի արդյունաբերության մեջ աշխատող բանվորներին, ծառարուղերին, ինժեներա-տեխնիկական անձնակազմին հատկացված բնակարանային Փոնդը 1929 թ. հունվարի 1-ին կազմում եր 7.500 հազար քառ. մետր, 1930 թ. հունվարի 1-ին՝ 8.500 հազար քառ. մ., 1931 թ. հունվարի 1-ին՝ 10.2 միլ. և 1932 թ. հունվարի 1-ին՝ 14 միլ. քառ. մ. :

Առանձին պայմանների մեջ ե բնակարանային շինարարությունը ածխարդյունաբերության գծով : Անցյալ տարվա գարնան սկզբը կենտրոնական Կոմիտեն կտրականապես զբեց ածխարդյունաբերության բանվորների բնակարանային պայմանների հարցը : Ընկ Ստալինը կորուկ կերպով հարց զբեց, վոր, ինչպես հոսունությունը հաղթահարելու, այնպես ել ածխահաների բնակարանային պայմանները բարեխավելու համար անհրաժեշտ ե հենց այս տարի վճռականորեն ընդարձակել բնակարանային տարածությունը ածխի ռայոններում : Այս խնդրին արագ լուծում տալու համար մենք սկսեցինք կառուցել փայտյա ստանդարտ տներ, ինչպես և տեղական շինանյութերից շինված տներ : Յեթե 1930 թ. ածխի ռայոններու ներդրվել է 95 միլ. ո., առաջ 1931 թ.՝ 201 միլ. ո. : Քարածիսի արդյունաբերության բանվորների, ծառայողների և ինժեներա-տեխնիկական անձնակազմի բնակարանային Փոնդը 1929 թ.

Հունվարի 1-ին կազմում եր 2 միլ. քառ. մ., 1930 թ. հունվարի 1-ին՝ 2,2 միլ. քառ. մ., 1931 թ. հունվարի 1-ին՝ 2,5 միլ. քառ. մ. և 1932 թ. հունվարի 1-ին՝ 4 միլ. քառ. մ. :

Մակար : Բայց մեղ մոտ փայտյա տները վատ են :

Որջոնիկիձեն : Փայտյա տները վատ են, բայց յես կարծում եմ, յեթե այդ փայտյա տները հարկ յեղածին պես հավաքվեն, նրանց հարկ յեղածին պես նայեն, մաքուր պահեն, ապա այդ փայտյա տները շատ են, իսկ Դոնբասում վատ են դառնում : Իսկ զիտե՞ք, ընկ Մակար, վոչ միայն փայտյա տները, այլև ինչպիսի տուն վոր կամենաք, յեթե նրանց խնամք չտանես, յեթե կեղտով լցնես, ապա ամեն անսակ տուն ել վատ կլինի :

Մակար : Յեթե Ստանդարտ-բնակչինը պետք ե կառուցի, ապա ամենը կեղտուու կլինեն :

Որջոնիկիձեն : Տեսնո՞ւմ եք, կառուցում ե Ստանդարտ-բնակչինը, բայց բնակվում եք դուքք : Ստանդարտ-բնակչինը չի կարող ձեր յետելից ման զալ և հարվաքել կեղտու այն տներից, ուր դուք եք ապահում : Տները դուքք պետք ե մաքրեք : Յեկ ինչքան ել վոր յես ինքա հարձակվել եմ Ստանդարտբնակչինի վրա, այնուամենայիս պետք ե տեսէլ, վոր նա իր աշխատանքների բոլոր թերություններով հանգերձ կարողացել ե գրեթե կրկնապատկել բնակարանային տարածությունը Դոնբասում :

Մակար : Հարկավոր ե դիտել :

Որջոնիկիձեն : Ինքտ դիտիր և մաքրիր :

Մակար : Ընկ Պոստիչել տեսել ե :

Պոստիչել : Յես տեսել եմ, բայց յես հո չեմ ասում, վոր նրանք վատ են :

Որջոնիկիձեն : Ծավալելով ծանր արդյունաբերությունը—մեր յերկրի ացիալիստական վերակառուցման այդ հիմքը,—մենք անցած ժամանակաշրջանում զգալի առաջարկմություն ենք ունեցել նաև թերեւ արդյունաբերության գծով : Թեև այն, ինչ մենք ունենք ներկայումս, զգալիորեն ավելի բարձր ելայն սպառման առարկաների արտադրության նախապատերազմ յան մակարդակից, բայց մենք պետք ե հավասարինք վոչ թե յերեկվա որվան, այլ բանվոր գտածկարգի այսորվա աճած պահանջներին :

(Զայներ : Ճի՞շտ ե) :

Յեթե վերցնենք 1913 թվականը, ապա դուրս ե գալիս, վոր ամբողջ Ռուսաստանում արտադրվում եր 27 միլ. դուրս կրկնական միլիոնը 1931 թ. մենք արտադրեցինք 53,9 միլ. դուրս, այսինքն՝ գրե-

թե 2 անգամով ավելի նախապատճերագմյանից և  $2\frac{1}{4}$  անգամ ավելի քան 1925 թվին:

1913 թ. կոչկեղեն և արտադրված 8,4 միլ. դույզ, 1925 թ. մենք արտադրել ենք 8 միլ. դույզ, 1931 թվին՝ 76,8 միլ. դույզ, այսինքն՝ 9 անգամ ավելի նախապատճերագմյանից և 9,5 անգամ ավելի, քան 1925 թվին: Յեթե անդամ հաշվի առնենք, վոր 1913 թ. տնայնագործներն արտադրել են 8,5 միլ. դույզ, այդ գեղազում ևս տարբերությունը հսկայական է: Բայց այնուամենայնիվ այսոր 76,8 միլ. դույզը մեզ համար քիչ եւ և միանգամայն բնական է, վեր քիչ է:

Գործածության սավոն: Ինչքա՞ն խոսակցություններ են յեղեւ և կան սապոնի պատճառով: Դե տեսեք, խնդրեմ, 1913 թ. արտադրված և 94.000 տոնն սապոն, 1925 թ.՝ 80.000 տոնն, 1930 թ.՝ 176.000 տոնն, 1931 թ.՝ 182.000 տոնն. (Ծիծաղ): Գրեթե յերկու անգամ ավելի, քան նախապատճերագմյան ըջանում: Բայց այնուամենայնիվ քիչ է (Զայնիք: Քիչ է):

Բամբակեղեն մանվածքը 1913 թ. կազմում էր 270.000 տոնն, 1925 թ.՝ 208.000, 1930 թ.՝ 284.000, 1931 թ.՝ 306.000 տոնն:

Ի՞նչն է, ընկերներ, վոր դանդաղեցնում և թեթև արդյունաբերություն հսկայա ուժգին գարզացումը: Հումքը: Յեկ արդտեղ Հողմողկոմատի մեր ընկերներին կարող ենք նույնպես պահանջ առաջադրել: Նրանք շատ յեռանգուն և շատ իրավացի կերպով հարձակվում են մեզ վրա, յերբ ուղում են մեքենաներ ստանալ, բայց, ըստ իս, արդյունաբերությունը նույնպես իրավունք ունի նրանցից ավելի շատ հումք պահանջել... (Զայնիք: Ճիշտ է):

Մեր տեքստիլ գործարանները հնարավորություն ունեն ռացիոնալացման և մեքենաների վոչ մեծ ավելացման միջոցով տարեկան վերամշակել 40 միլ. փութ բամբակ: Իսկ այժմ մենք վերամշակում ենք, ինչպես գիտեք, 23-24 միլ. փթից վոչ ավելի:


Յես, ընկերներ, տվյալներ բերեցի բանվոր գասակարդի թվական աճման, մեր բանվորների աշխատավարձի. նրանց բնակրանային ֆոնդի ավելացման, լայն սպառման առարկաների արտադրության աճման մասին: Այժմ մի բողք նոյնիք, թե ինչ և կատարվում կապիտալի յերկրներում:

Մինչդեռ աշխատավարձի ֆոնդը ԱՍՀՄ-ում 1929 թ. 10,5 միլիարդից 1931 թ. հասել է 21 միլիարդ ռուբլու (աճում 100 տոկոսով), վերացված և գործազրկությունը, բանվորների և ծառայողների թիվն ամբողջ յերկրում ավելացել է 6,2 միլիոն հոգով, —այս ժույն ժամանակամիջոցում վարձու աշխատանք կատարողների յե-

մամուտները ՀԱՄՆ-ում 1929 թ. 45 միլիարդ գոլարից 1931 թ. իշել են 28 միլիարդ գոլարի: Անկում 37%-ով: 1931 թ. վերջին Ամերիկայում հաշվվում է 12 միլ. գործազրկություն, կամ բոլոր վարձու աշխատազումների 30%—ը, դրանից գույքս կա շաբաթական 2-3 որ աշխատազնների մի վիթխարի բանակ. խիստ իջել երդոր բանվորների աշխատավարձը: Իսկ ամբողջ Յեվրոպայում և ՀԱՄՆ-ում 25 միլիոնից վուչ պակաս գործազրկություններ կան:

### ՍԵԶՈՆԱՅՆՈՒԹՅԱՆ ՀԱՂԹԱՀԱՐՈՒՄԸ

Մեր արդյունաբերության 1931 թ. լուրջ նվաճումներից մեկն այն, վոր մենք հաղթահարեցինք արտադրանքի ամեն տարվա ամառային իջեցումը, վոր մենք ունեյինք 1924-ից մինչև 1930 թվականը: Յեկ յեթե դուք ուշադրություն դարձնեք այս դիագրամի վրա, ապա կտեսնեք, թե ի՞նչպես ամեն տարի հունվար, փե-անդամ ավելի, քան նախապատճերագմյան ըջանում: Բայց այնուամենայնիվ քիչ է (Զայնիք: Քիչ է):



տըրիար և մարտ ամիսների վերելքին հաջորդում եր անկումը սկսած ապրիլ ամսից, և ելի նոր վերելք, սկսած ուղարկում սեպտեմբեր ամսից: Այդ դուք տեսնում եք բոլոր տարիների նկատմամբ: Ամենախիստ անկումը դուք տեսնում եք 1930 թ. ամռան:

1931 թ. ամառային անկում մենք թույլ չտիինք: Այդ բացատրվում է ինչպես արդյունաբերության կաղմակերպվածության աճումով, այնպես ել այն հսկայական աճումով, վորագիսին կատարեցին այդ շրջանում կուսակցությունը և նրա կենտրոնական կոմիտեն: Հսկայական գեր խաղացին այստեղ ընկ. Ստալինի հայտնի դիրքավորումները, վորով նա ավեց անտեսալարների հունիսյան իուրչոգակցությունում:

#### XIV ՀԱՄԱԴՐԱԽԱՐԻՑ ԴԵՊԻ ԽՎԱԿՈՆՖԵՐԱՆԱԾ

Հնկերներ, Կոմինտերնի Կոնդրեսում 1922 թ. Լենին առում եր.

«Խուսափանի համար փրկություն եւ վուչ միայն դյուզացիական տնտեսության լայն բերքը—այդ դեռ քիչ եւեւ վոչ միայն դյուզացիության լայն սպառման առարկաներ մասակարարող թեթև արդյունաբերության լավ վիճակը—այդ ել դեռ քիչ եւ, —մեզ հարկավոր ենաւ ծանր արդյունաբերություն: Իսկ այդ լավ դրության մեջ դնելու համար պահանջվում ե շատ տարիների աշխատանք:

Շանր արդյունաբերությունը պետական սուբսիդիաների կարիք ունի: Յեթե մենք այդ սուբսիդիաները չձարնենք, ասու մենք, իրեն քաղաքակիրթ պետություն, —ել չեմ ասում իրեն սոցիալատական, —կորած ենք: Ուրեմն, այդ տեսակներից մենք վճռական քայլ ենք արել: Մենք ծանր արդյունաբերությունը սեփական վութերի վրա կանգնեցնելու համար անհրաժեշտ միջոցներ ձեռք բերինք: Այն դումարը, վորք մենք ճարել ենք մինչև այժմ, հաղիկ են 20 միլիոն վոսկի ռուբլուց անցնում, բայց համենայն գեղս այդ դումարը կա, և նա նշանակվում ե միայն նրա համար, վորք բարձրացնի մեր ծանր արդյունաբերությունը»\*):

Մեր ծանր արդյունաբերության դրությունը ներկայութեա վոչ մի չափով նման չի այն դրության, վոր կար 1922 թ.: Այդ տարիներում արդյունաբերությունը հսկայական չափով աճել, ամբացել և վատահ քայլերով առաջ ե զնում: Բայց այնուամենային ծանր արդյունաբերության, մեր արդյունաբերության դարձացման հար-

ցը մնում է փրբե նույն աստիճանի առաջնակարգ մի ինտերի, վորպիտին համարում եր շարունակ Վարդիմիր իլլիքը:

Յենելով այս դեկավար դիրեկտիվից, ընկ. Ստալինը մեր կուսակցության XIV համագումարում, արագիստական-դինով յավական ուղղված պայքարելով, հետեւյալ կերպ ձեռփակելով մեր գլխավոր գիծը.

«Մեր յերկիրը սգրաւրային յերկրից դարձնել ինդուստրիալ մի յերկիրը, վոր ընդունակ լինի իր սեփական ուժերով արտադրել անհրաժեշտ սարքավորումը, —ահա թե ինչուն և մեր գլխավոր գծի ելությունը, հրմունքը: Մենք պետք ե այնպես զնենք գործը, վոր տնտեսավարների մասպերություններն ու ձգումներն ուղղված իինեն հենց այդ կողմը, մեր յերկիրը սարքավորում ներմուծող յերկրից սարքավորում արտադրող յերկրի վերածելու կողմը: Վորովհետեւ դրանում ե այն բանի յերաշխիքը: Վորովհետեւ դրանում ե այն բանի յերաշխիքը, վոր մեր յերկիրը չի գտնա կապիտալիստական յերկրների հավելվածը» (ընկ. Ստալինի յեղքափակման խոսքը կուսակցության XIV համագումարում. 1925 թ. դեկտեմբեր):

Կուսակցության XIV համագումարը վորոշեց. «Ապահովել ԽՍՀՄ-ի տնտեսական ինքնուրույնությունը, վորը կպաշտպանի ԽՍՀՄ-ն կապիտալիստական համաշխարհային տնտեսության հավելվածը գառնալուց դրա համար կուրս վերցնել՝ ինդուստրացման յենթարկելու յերկիրը, զարգացնելու արտադրության միջոցների արտադրությունը և ռեզերվ կազմակերպելու տնտեսական շարժության համար»:

Ի՞նչպես ե կատարվում, ըներներ, համագումարի այս դիրեկտիվը, վորը տրված է Վարդիմիր իլլիքի ուղղակի ցուցմունքների հիման վրա: Կուսակցության XIV համագումարից հետո անցել ե 6 տարի: Թույլ ավելի բերել մի բանի թիւիր, վորոնք պատասխանում են այս հարցը:

\* ) Լենին, XXVII հատոր:

Արտադրանքը 1925 յնի 1931 թ. թ.  
(կարեվորագույն տեսակները նույնալու)

	1925 թ.	1931 թ.	1925 թ. ամառն տռկառը	1931 թ. ամառն տռկառը
Քարածուկ . . . . .	17,6 միլ. տոնն	56 միլ. տոնն	Ավելիք քան 3 անգամ	
Կողմ . . . . .	1,62 »	6,75 »	» 4 անգամ	
Նավթ առանց գողի .	7,2 »	22,3 »	» 3 »	
Տորֆ . . . . .	2,5 »	9,4 »	Ավելիք քան 3,5 անգամ	
Թուջ . . . . .	1,5 »	4,9 »	» 3,5 »	
Պողպատ . . . . .	2,1 »	5,3 »	» 2,5 անգամ	
Մամլած յերկաթ . . .	1,6 »	4,0 »	» 2,5 »	
Պղինձ . . . . .	12 հազար »	48,8 հազ. »	» 4 »	
Պղնձի կոլչեղան . . .	229 »	1,084 »	Ավելիք քան 4,5 անգամ	
Ցեմենտ . . . . .	872 »	3,344 »	Մոտ 4 անգամ	
Սուլաբրոստիտ . . .	67,8 »	521,6 »	» 7,5 անգամէց ավելի	
Ռեզինե վառամաման . .	19 միլ. գույյդ	54 միլ. գույյդ	2,5 »	
Մեքենաշինություն				
ընհանուր առմամբ .	730 միլ. սուր.	5,724 միլ. ս.	Գրեթե 8 անգամ	
Գյուղատն. մեքենաշին. .	48,6 »	441 »	» անգամ	
Ելեկտրոսեխնիկա . .	92,5 »	980 »	» 10 »	
Դաշտյահներ . . . . .	2,5 »	40 »	» 16 »	
Ելեկտր. եներգիայի արտադրություն կա-				
յաններում . . . . .	2,925 միլ. կվ. 10,600 միլ. կվ.	3 անգամից ավելի		
Ելեկտրոս սայունական				
կայան . . . . .	935 »	6,450 »	7 անգամ	
Բույր կայանների սահ-				
մանվ սծ հարողու-				
թյունը (տարեկերչեն). 1,375 հազ. կվ.	3,967 հազ. կվ.	Գրեթե 3 անգամ		
Ելեկտր. սայուն. կայան .	867 »	2,287 »	» 6 անգամ	
Տրամաքաներ . . . . .	469 հատ	41,280 հատ		
Ավտոմեքենաներ . . .	80 »	20,511 »		

Ահա, ընկերներ, այն հարցի պատասխանը, թե ի՞նչպես են կա-  
տարվել Վլաղիմիր Իլյիչի դիրեկտիվները և կուսակցության XIV  
Համագումարի վորոշումը:

«Ամեն կերպ ծավալել ծանր արդյունաբերությունը, վորպես  
սոցիալիստական շինարարության հիմնական բազա, ոև և գումա-  
վոր մետալուրգիան, Ելեկտրական եներգիայի և վառելանյութի  
արտադրությունը, մեքենաշինությունը, քիմիան, մուսակա շրջա-  
նում ստեղծել նոր հղոր մետալուրգիական բազա, հանձին «Ուրալ-  
Կուզբասյան կոմբինատի», —այդպիսին և կուսակցության XVI Հա-  
մագումարի վորոշումը:

Յուր 1930 թ. ամառն եր:

Այսուը՝ Մագնիսողորսկը, Կուզնեցկի գործարանը, Ուրալմաշ-  
արույը, Զելյարինսկի Փերո-ձուլվածքների գործարանը, Կուզ-  
նեցկի ածուխը, Տագիլի մետալուրգիական գործարանի կառուց-  
ման ձեռնարկումը կուսակցության այդ վորոշման պատասխանն  
են հանդիսանում:

Չեթե 1930 թ. ամառն դա բայց լիների համագումարի հան-  
գումն վորոշումն եր, ապա այսոր այդ վորոշումը իրականություն  
ե դառնում: Այստեղ, ուր 1½—2 տարի սրանից առաջ բառիս բուն  
նշանակությամբ վոչինչ չկար, այսոր բարձրացած են վիթխարա-  
գույն գործարաններ:

Բայց դրանով չի ստհանափակվում այս պատասխանը: Պոր-  
ծարկված ե Բերեզնիկի առաջին հերթը, Զելյարինսկում կառուց-  
վում ե տրակտորի գործարան, Նովոսիրիսկում կառուցվում ե  
կոմբայնի գործարան, Ուֆայում՝ մոտորի գործարան, Սվերդլով-  
սկում ե քաղաքագործարան կոմբինատ, —այս ամենը բարձրանում ե  
նոր, Ուրալ-Կուզբասյան բաղայի վրա:

Սյունես լուծվեցին, ընկերներ՝, այս տարիներում մեր յերկ-  
րում սոցիալիզմ կառուցելու հարցերը:

Մենք բոլորս հիշում ենք, վոր այդ սահուն չընթացավ: Մեր  
կուսակցության ճիշտ գիրքը պաշտպանելու համար մենք ստիպ-  
ված յեղանք ամենասողոք պայքար մղել տրոցկիստների, զինո-  
վյալականների, աջերի դեմ: Առանց այդ պայքարում մեր կուսակ-  
ցության վկանը դիմում լինիյան դիմը պաշտպանելու, մենք այս  
հաջողությունները չելինք ունենա: Միայն չնորհիվ այն բանի, վոր  
լինինյան Կեն բոլոր այս տարիների ընթացքում ճիշտ ղեկավարեց  
կուսակցությանը, միայն դրա չնորհիվ մեզ հաջողվեց այս հադ-  
թանեկը:

Կուսակցության լինինյան գծի համար, մեր յերկրում սոցիա-  
լիզմի հաղթանակի համար մղվող այս հսկայական պայքարում մեր  
կուսակցության առաջնորդն ե յեղել և մնում ե ընկ. Ստալինը:

ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՆԵՐՍՈՒՄ ԳՈՅՉՈՒԹՅՈՒՆ  
ՈՒՆԵՑՈՂ ՀԻՄՆԱԿԱՆ ԹԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 1931 թ.

Դրանք են ընկերներ, մեր արդյունաբերության հիմնական  
հաջողությունները 1931 թ.: Զնայած, սակայն, այս հաջողու-  
թյուններին, մենք ծրագիրը թերակատարեցինք:

1931 թ. պլանի կատարումը կնշանակեր այն, վոր արդյունաբերությունը հնգամյակը կատարում է Յ տարում : Այդ չաշողվեց : Այդ հաջողվեց միայն մեր արդյունաբերության առանձին առաջավոր ճյուղերին:

Բայց մենք ավելի մեծ հաջողություններ կունենայինք, յեթև ավելի լավ աշխատեյինք:

Պահանջակատար թերակատարված ե: Ինքնարժեքն իջնելու փոխարեն բարձրացավ, արտադրողականությունն ավելացավ անշահան չափով :

Իսկ վո՞րաեղ են գտնվում պլանի թերակատարման պատճառները :

Առաջին պատճառը, վոր, դեկտեմբերից սկսած, և հատկապես հունվարին ու փետրվարին սեղմեց արդյունաբերությունը և թույլ չտվեց, վոր ծավալվի, այդ անպայման անցյալ տարվա տրանսպորտային դժվարություններն եյին :

Իմ բերած դիմումով դուք տեսաք, վոր 1930 թ., նախորդ տարիների որինակով, արդյունաբերությունն ամառն ընկնում ե, իսկ ոգոստոսից սկսում ե վերելքը և դեկտեմբերին արտադրանքը հասնում է 1.700 միլ. ոուրլու: Փոխանակ հետագա աճման, 1931 թ. հունվարին տրանսպորտն այդ կորագիծը դեպի վար և ծոռում և փետրվարին հասցնում է նախորդ տարվա փետրվարի մակարդակին, ինչպես այդ ցույց ե տրված դիմումում: Արդյունաբերությունը կորցրեց դեկտեմբերին ձեռք բերած մակարդակը: Այդ մի հարցած եր, վոր բավական ուժեղ չափով խանդարեց արդյունաբերությունը: Ավելին. դա տվեց նաև այն վնասը, վոր ամեն էնչ սկսեցին գցել արանսպորտի վրա: Բոլորն իրենց ներքին պահանջունները փաթթվում եյին տրանսպորտի շնչին:

Տրանսպորտային դժվարությունները պլանի թերակատարման գլխավոր պատճառներից մեկը հանդիսացան:

Մյուս պատճառները հենց իրեն՝ արդյունաբերության մեջ են գտնվում: Յետ արդեն խոսեցի աշխատավարձի հայտաբեցման ժամանին:

Այսուհետեւ՝ աշխատանքի արտադրողականության, աշխատավարձի կազմակերպման, արտադրության կազմակերպման մասին ձեռնարկություններում: Ով ասեք զրադշում և աշխատանքի հարցերով, բայց ամենից քիչ զրադշում ենա, ով պետք ե ամենից շատ զրադշի այդ գործով: Գործարանի դիրեկտորը, վարպետը, ցեխի պետը ամենից քիչ են զրադշում աշխատանքի հարցերով: Ով ասեք հրամայում ե այս բնագավառում, բայց դիրեկտորը գերադասում

է վորոշ չափով մեկ կողմը կանգնել այս աշխատանքից: Այդ բանի գետք չե: Իսկ չե՞ վոր յեթե ընդհանուր զբաղվելու լինեն այս հարցով—բանվորների խելացի ու հմուտ դասավորություն կատարեն, ապա մեքենաները, վորոնց վրա այդ բանվորներն աշխատում են, զգալի չափով ավելի մեծ արտադրանք կտան, քան թե տալիս են արժմ: Հենց նույն Ստալինգրադի գործարանը կարող ե ցայտուն որինակ ծառայել այդ բանին: Ստալինգրադի գործարանի տրակտորը 1931 թ. հունվարին արժեկ 5793 ր., իսկ 1931 թ. գեկտեմբերին՝ 3.328 ր.:

Անբավարար տեխնիկական դեկավարությունը և ներգործարանային պլանավորումը, վոր խղում են առաջացնում առանձին ցեխների միջև, մեր միավորումների խոշորությունը և ձեռնարկություններից կտրված լինելը պլանի թերակատարման լուրջ պատճառներից մեկն եյին:

1929 թ. վերջերքին մենք ստեղծեցինք ճյուղայինք մեծ միավորումներ, ցանկանալով ուժեղացնել ձեռնարկությունների տեխնիկական և տնտեսական դեկավարությունը: Իրավանում մի շարք դեպքերում միանգամայն հակառակն ստացվեց: Միավորումները կորցեցին ձեռնարկություններից և միջնապատ դարձան ժՏԳԽ-ի ու ձեռնարկությունների միջև: 1931 թ. մենք պետք ե արագորեն վերականուցվեյինք, փոքրացնելինք մեծ միավորումները, զրանով իսկ նրանց մոտեցնելինք ձեռնարկություններին,—դա տալիս ե իր արդյունքները: Ավելի փոքր չափի միավորումներն ավելի լավ են կատարում իրենց խնդիրը:

«Ածուխ» միավորումը միացնում եր ածխի բոլոր ավագանները, «Պողպատ» միավորումը՝ Միության ամբողջ մետալուրգիան: Ինքնուսինքյան հասկանալի յե, վոր մեկ միավորման համար ուժեղից բարձր ե ամեն ինչ ընդդրկել մեկ կենտրոնից:

Վերջին տարիների ընթացքում մեղ մոտ տնտեհաշվարկը գրեթե ամբողջապես անհետացավ: Հարկավոր յեղավ այն արմատացնել: Այս աշխատանքը գեռ ամենեկին չի վերջացած: Ոուբլով կոնարությունք առանձնապես չենք սիրում, իսկ ճիշտ դրված ոուբլով կոնարությը, իսկական տնտեհաշվարկը անտեսության վարժան անհամատել նախադրյալն ե հանդիսանում:

Խոշոր թերություն եր թույլ աշխատանքը՝ կատարման ստուգաման ուղղությամբ:

Մենք մինչև այժմ չենք սովորել հարկ յեղածին պես դնել կատարման ստուգումը: Մենք վոչ-միշտ կարողանում ենք ստուգել և

մինչև վերջը աշխատել, վոր մեր վորոշումը կենսագործմի ժամանակին և առանց աղավաղումների:

Անցյալ տարվա յերկրորդ կիսում մենք պայքար տկացնելու այթերությունների դեմ այն ցուցումների հիման վրա, վոր տվեց այժմամանակ ընկ. Ստալինն իր ճառում: Այդ ժամանակվանից կես տարի յէ անցել:

Յերկրորդ կիսամյակում տրանսպորտի աշխատանքի զգալիքարելավման հետ միասին և ձեռք առնված կաղմակերպչական միջոցառումների հետեւնքով յեռամսյակ առ յեռամսյակ, ամես առ ամիս աշխատանքը բարելավվում է: Յեթե 1931 թ. առաջին յեռամսյակում մենք աճում ունեցանք 1930 թ. համապատասխան յեռամսյակի համեմատությամբ 8,8%-ով, ապա յերկրորդ յեռամսյակում ունեցանք 18,3%, յերրորդում՝ 30,4% և չորրորդում՝ 26%, ամսական արտադրանքը գեկտեմբերին հասցնելով 2·100 միլ. ո., 1930 թ. գեկտեմբերի 1·700 միլիոնի դիմաց: Այս պայքարն, ընկերներ, պետք ե ամբողջ վճռականությամբ շարունակվի 1932 թ.: Առանց արմատախիլ անելու այն թերությունները, վորոնց մասին յես այսուղ հիշատակեցի, մեզ համար շատ զժվար կլինի կատարել այն վիթխարի խնդիրը, վոր դրված ե արդյունաբերության առաջ 1932 թ.:

Յես արդեն ասացի, վոր ինքնարժեքն իջնելու փոխարեն բարձրացել է: Ճիշտ ե, արդյունաբերության վոչ բոլոր ճյուղերն են ինքնարժեքը բարձրացրել: Կան արդյունաբերության ճյուղեր, վորոնք իջեցրել են: Բայց յեթե վերցնենք միջն հաշվով, ապա ԺՏԽ-ի ամբողջ արդյունաբերության գծով մենք ունեցել ենք իջեցման փոխարեն 3,7%-ով բարձրացում, ծանր արդյունաբերության գծով՝ 5,5%, թեթև արդյունաբերության՝ 1,25%: Բայց միաժամանակ մեքենաշնուրությունն ինքնարժեքն իջեցրել ե 6,7%-ով, ընդ վորում մեքենաշնուրության ինքնարժեքի իջեցումը կատարվել է յեռամսյակ առ յեռամսյակ: Առաջին յեռամսյակում կատարվեց 0,6%-ով իջեցում, յերկրորդում՝ 5,6%-ով, յերրորդում՝ 9,6 տոկոսով և չորրորդում՝ 11,6%-ով: Այդ արգեն լավ է: Այդ արգեն գալիս ե ասելու, վոր մարդիկ սկսել են նոր ձեռոչ աշխատել: Այդ գալիս ե ասելու, վոր ինքնարժեքի իջեցման ռեզերվներ մենք ունենք: Յեթե մեքենաշնուրությունը 1932 թ. ավելի լավ աշխատի, քան 1931 թ. ապա ինքնարժեքի իջեցման առաջարկությունը կատարի: Տեքստիլ մեքենաշնուրությունը 1931 թ. ինքնարժեքն իջեցրեց 10,8%-ով, ընդ վորում III յեռամսյակում իջեցումը հասավ 14%-ի, իսկ IV յեռամսյակում՝ 17%-ի: Ելեկտրո-

տեխնիկական արդյունաբերությունը 1931 թ. ինքնարժեքն իջեցրեց 8,2%-ով, ընդվորում IV յեռամսյակում՝ 7,3%-ով: Նավթահանձան գծով իջեցում՝ 9,9%-ով, ռեզինի՝ 4,2%, լաքաներկի՝ 3,3 տոկոս, անիլինի ներկի՝ 2,8%:

Դրանց դիմաց ինքնարժեքը բարձրացրին—անտառային արդյունաբերությունը՝ 16%-ով, աև մետալուրգիան՝ 17%-ով, սորֆը՝ 28,5%-ով և քարածլիսի արդյունաբերությունը՝ 30%-ով: Այս մի քանի ճյուղերն ինքնարժեքի խիստ բարձրացումով կլանեցին արդյունաբերության մյոււմ՝ ինքնարժեքն իջեցրած ճյուղերի ինսայումները, իսկ իրենք առայժմ առանձնապես չեն չաղացել:

Մենք, ընկերներ, չենք կարող այլևս այս կերպ աշխատել: Յեթե առաջին հնդամյակում արդյունաբերությունը չարունակ դուտացիաներ եր ստանում, ապա 1932 թ. և յերկրորդ հնդամյակում արդյունաբերությունը խոշոր չափով պետք ե մասնակցի կուտակմանը՝ հետագա առաջինակացման համար: Այս ինդիբը մեր առաջ ծառանալու յե ամբողջ 1932 թ. ընթացքում նա առավել ես իրազորենի յե, վորովհետեւ մենք սկսում ենք աշխատել նոր տեխնիկայով զինված հրաշալի գործարաններում: Յեթե մենք կարողանանք տիրապետել այդ տեխնիկային, դա ինքնըստինքյան կոտա եժան արտադրանքը: Կուտակյունն իրավունք ունի պահանջելու, վոր ամերիկական և յելլուպական տեխնիկայով զինված գործարանները տիսեն հժան արտադրանք տալ, ամենակարճ ժամանակում անցկացնելով անխուսափիելի մանկական հիվանդությունների չրջանը, վոր նրանք համենայն զեպս առան վոչ թանդ արտադրանք, քան այս արտադրանքը, վոր տալիս են այդպիսի գործարաններն Ամերիկայում և Յելլուպակյուն: Այդ պահանջը մենք պետք ե առաջադրենք մեր գործարաններին: Ինչո՞ւ բանվորներն երենց գործարաններում և իրենց սոցիալիստական հայրենիքում պետք ե ավելի վատ աշխատեն, քան Յելլուպակյի և Ամերիկայի բանվորները կապիտալիստների համար: Վերացնել այն թերությունները, վոր կային արդյունաբերության մէջ 1931 թ., քշել մները և ձեռնարկել 1932 թ. պլանի կատարման գործը—ահա՛ այս ինդիբը, վոր ծառացած ե այժմ մեր առաջ:

Անցյալ եմ 1932 թ. պլանին:

## 1932 թ. ՊԼԱՆԸ ՅԵՎ ՆՐԱ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Հնկերներ, 1932 թվի պլանով սահմանված արդյունաբերական արտադրանքի չափն է 37,5 միլիարդ, վոր տալիս է 36 տոկոս աճում 1931 թվի համեմատությամբ: Ինքնարժեքի իջեցումը սահմանված է՝ 7 տոկոս: Բանվորների թիվը պետք է աճի ամբողջ արդյունաբերության մեջ, ներառյալ նաև շինարարությունը, մեկ միլիոն 200 հազարով, աշխատավարձն ավելացվում է 11 տոկոսով արդյունաբերության մեջ և 5,6 տոկոսով շինարարության բնագավառում: Աշխատանքի արտադրողականությունը պետք է ավելացվի 22 տոկոսով, կապիտալ շինարարությունն ամբողջ արդյունաբերության մեջ՝ ավելացրած նաև վերջին լրացուցիչ հատկացումը՝ կազմում է 11,790 միլիոն ռուբլի, այդ թվում ծանր արդյունաբերության ասպարիդում՝ 9.200 միլիոն ռուբլի:

Այս, ընկերներ, 1932 թվի պլաննը: Այս պլանով հատկապես առաջ է քաշվում և դրվում, վորպես վողջ ժողովրդատնտեսական պլանի կենտրոնական խնդիր՝ սեփ մետաղագործության, ածխարդյունաբերության և մեքենաշինության արտադրական ծրագրի ու կապիտալ շինարարության պլանի իրագործումը:

## ՍԵՎ ՄԵՏԱՂԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆԸ

Մենք ձեզ հետ միասին զիտենք, վոր մետաղագործության ասպարիդում մենք բավական դգալի կերպով հետ ենք մնում: Յեթե արդյունաբերության կարևորագույն ճյուղերում 1931 թվին մենք ունենինք նշանակալից աճում, ապա մետաղի ասպարիդում մենք մնացինք նույն մակարդակի վրա:

Բանն ինչո՞ւն է: Ի՞նչ պատճառներ հնարավորություն շտվին մեղ իրագործելու սեփ մետաղագործության 1931 թվի պլանը:

Հարկաւոր ե ուղղակի ասել, վոր պլանը փոքր չեր, հարկավոր եր տալ մի տարվա ընթացքում չուզունի աճ 3 միլիոն տոնն: բայց մենք չկարողացնք տալ վոչ միայն յերեք միլիոն տոնն, այլև անդամ մի քանի հարյուր հազար տոննի աճ: Ավելին՝ մենք մի քանի հարյուր հազար տոնն չուզուն պակաս տվինք 5 միլիոնից:

Ես արդեն ասացի, վոր առաջին յեռամսյակում արդյունա-

բերությանը չար ուժովին հարվածեց տրանսպորտի վատ աշխատանքը: Յեթե կուղեք՝ տրանսպորտն արդյունաբերության վոչ մի ճյուղին այնպես ուժեղ չի հարվածել, ինչպես մետաղագործությանը, վորովհետեւ հալոցը կիսով չափ աշխատեցնել, կամ այսոր հանգցնել՝ հանքի կամ կոքսի պակասության պատճառով, իսկ յերկրորդ որը նորից վառել՝ առանց կոքսի, հանքի, Փլյուսների բավականաչափ պաշտրի, — նշանակում է շոշափելի ամերանցան յենթարկել հալոցը: Յերբ մեքենա կառուցող գործարանում այսոր մետաղը չի բավականացնում, գործարանը չի աշխատում, բայց դագգահները մնում են իրենց տեղում՝ առանց վորեն կործանման: Վաղը մետաղը կհասցվի, և աշխատանքն առաջվա պես առաջ կգնա: Այդպես չե հալոցը գործը: Հալոցը պետք է վարել ճիշտ ուժիմով: Ունենալ համապատասխան վորակի կոքս, հանք, Փլյուսներ անհարժեշտ քանակությամբ, — միայն այս գեղքում հալոցի նորմալ աշխատանքն նյութեղենի կողմից ապահովված կլինի: Առանց այս տարրական պայմանների չկա ճիշտ աշխատող մետաղագործական գործարան, առանց այս պայմանների որպես ադրեգատները յենթարկում են վաղաժամ մաշման, քայլքաման:

Յերկրորդ կամ ավելի ճիշտ ամենահիմնական պատճառն է՝ ինժեներատեխնիկական կարբերի աշագին պակասությունը: Բանից դուրս յեկալ, վոր չունենք բավականաչափ փորձված ինժեներներ, վորոնք ճանաչելին մետաղը, վորոնք ճանաչելին հալոցի լանքը, վորոնք հետեւելին հալոցին և իմանային, թե յերբ և ինչ է կատարվում նրա հետ: Էնկ. Վ. Մեթլուակը, վոր յերկար տարիներ մետաղագործության գլուխ եր կանոնած, անցյալ տարի ամառը յեղալ Զերժինսկու անվան գործարանում և այնտեղից ինձ գրում եր, վոր գործարանում ցեխերի ամենապատասխանատու տեղերը գրավում են յերիասարդ ինժեներները, վորոնք դեռ յերեկ են թողել գլորոցական նստարանը, սքանչելի տղաներ են, ենտուղիատներ և մի յերկու-յերեք տարուց հետո նրանցից դուրս կգնա լավ ինժեներներ: Այդ անկասկած է: Բայց այսոր նրանք առվորում են և այդ սովորելը հալոցին եժան չի նստում:

Հավասարեցումն աշխատավարձի ասպարիզում նույնպես իմաշել ե իր բացասական գերը: Յես դրա մասին խոսել եմ:

Սեփ մետաղագործության բանվորների բնակարանային պայմանները, այդ բանվորների մատակարարումն ու սնունդը նույնպես գրված է յեղել վոչ բավարար հիմքերի վրա:

Արտադրական ծրագիրն անցյալ տարի չհաջողվեց: Մետա-

Ղաղթածական գործարանների արտադրությունը միայն այժմ սկսում ե տալ վորոշ արդյունքներ: Յերեկ մենք ունեյինք չուզունի 17.000 տոնն որական ձուլում: այսպիսի արդյունք մեր մետաղադրծությունը յերբեք չեր տվիլ: Այսոր մենք ունենք 16.800: Ես ասել եմ, մետաղադրծության մեջ աշխատաղ ընկերներին՝ տեսեք, դուք մեղ տալիս եք 17 հազար տոնն 17-րդ կուտ: կոնֆերենցիայի բացման նախորյակին կամ նրա բացման որը—այդ լավ ե, բայց չհամարձակվեք ընկրկել հետ՝ դեպի ցած:

Մեր հարավի մետաղադրծության աշխատանքը հունվար ամսի ընթացքում ցույց տվեց, վոր գործող հալոցները, չնորդով սպասարկվելու դեպքում, կարող են տալ շատ ավելի, քան տառվիր եյին: 1931 թվի ընթացքում մենք չկարողացանք գուրս գալ հալոցային վառարանների ոգտակար ծավալի ողտագործման այնպիսի կոնֆերենտների սահմաններից, ինչպիսին ե որինակ՝ 1,70—1,80—2, յերբեմն ել ավելի: Ստալինյան գործարանը վերցին որերս տալիս ե 1,26, Տօմակու անվան գործարանը և Ֆրունզեյի անվան գործարանը—1,33: այս առաջին շրջանում վատ չե: Հարկավոր ե ջանալ, վորակեալի հունվարի հաջողությունը ծավալի և այդ ժամանակ ծրագիրը կիրագործվի: Ավելին՝ լավ աշխատանքի դեպքում բանող գործարանները կարող են տալ 0.400 հազար տոննից շատ ավելի, իսկ այդ քանակը նրանք պարտավոր են տալ պլանի համաձայն: Ամեն ինչ կախված ե նրանից, թե նըրանց ինչպիս կմատակարարենք՝ հանք, կոքս ֆլյուսներ, մաղնեղիս: Անցյալ տարի մեղ տանջեց մագնեղիտը: Մագնեղիտը մենք արդյունահանում ենք Ռւբալում, բայց չկարողացանք բավարար քանակությամբ արդյունահանել: Անցյալ տարի մեղ ուղղակի տանջեց հրակայունը: Մենք արտասահմանից եյինք բերում այլ: Յեկ այլ այն ժամանակ, յերբ մեղ մոտ թե՛ Ռւկրայինայում, թե՛ լենինգրադի մոտ, թե՛ Ռւբալում, վորքան ասեք, կարելի յեր ձեռք բերել լավ հրակայուն կավ: Նույնիսկ հասարակ դոլոմիտ, կրաքար չկարողացան ժամանակին հասցնել հալոցներին: Այստեղ մենք ուղղակի հարց ենք զնում Հաղորդակցության ձանապարհների ժողկոմատի ընկերների առաջ—նրանք պետք ե ոգնեն մեղ ինչ կերպ ուզում ե լինի պատշաճ բարձրության վրա դնելու մետաղադրծական գործարաններին նյութեղեն հասցնելու գործը: Կրիվարոժիյ ավագանում ամբողջ տարգա ընթացքում ընկած են հանքանյութի ահազին պաշարներ, իսկ գործարանները հանքանյութի պակասություն են զգում:

Ռւբալում մինչև այժմ ել բեկում չկա աշխատանքի մեջ, և

մետաղադրծական գործարաններն առաջվա պես վատ են աշխատություն:

Մեր մետաղադրծության կապիտալ շինարարության առարկանում, մենք չկարողացանք իրագործել աղքեղատների ժամանակին պործարկելը: Ճիշտ ե, մի քանի ժամկետներ այստեղ ակներեք կերպով անիրադորելի եյին, որինակ՝ ըստ 1931 թ. հսկիչ թվերի, Զերժինսկու անվան գործարանի № 7 հալոցի գործարկության վեցամյակամած եր այդ թվի մայիսին, այնինչ 1931 թ. հունվարին նույնիսկ հիմքը, ինչպես պետք ե, դրված չեք: Սակայն և այսպես, չնայած այս բոլորին, սեվ մետաղադրծության կապիտալ շինարարության ասպարիզում ևս մենք առաջ դնացինք: Մենք կառուցում ենք յերկու վիթխարի գործարան՝ Մագնիստագորակինը և Կուգնեցիկինը: Այդ գործարանների մասին դիտեն բոլորը, պիտե ամբողջ յերկիրը: Այդ գործարաններն արժեն հսկայական գումարներ, հարյուրավոր միլիոններ: Ուկրայնայում մենք կառարսում ենք, յերեք խոշոր գործարանի՝ Մակենկայի Տոմսկու անվան, Զերժինսկու և Վարաչլուպի անվան գործարանների վերակառուցում: Արդյոք շատե՞րն են պատկերացնում, թե՛ ինչ ծագմական աշխատանք ե կատարվում այդտեղ:

Որինակ՝ ի՞նչ ե նշանակում Մակենկայի գործարանի վերակառուցումը: Նախապատերազմյան շրջանում այս գործարանը տալիս եր 230 հազար տոնն չուգուն, 1931 թ. նա տվեց 402 հազար տոնն, իսկ այս տարի պետք ե առ 670 հազար տոնն չուգուն:

Կանխար. — Վերակառուցումն ավարտելուց հետո:

Որզնիկիձեւ. — Վերակառուցումն ավարտելուց հետո գործարանը կտա 1,5 միլիոն տոնն: Այս արդեն վերակառուցում չե, ընկերնեք, այլ նոր գիգանտի կառուցում: Այս գործարանը՝ վերակառուցումն ավարտելուց հետո՝ տալու յե շատ ավելի, քան Կուգնեցիկին: Նույնը և Զերժինսկու անվան գործարանը:

Կանխար. — Ե՛լ ավելի:

Որզնիկիձեն. — Այս՝, ել ավելի: Վերակառուցումն ավարտելուց հետո, այս գործարանը տալու յե 1,8 միլիոն տոնն: Ներկայում Զերժինսկու անվան գործարանը տալիս ե 500 հազար տոնն:

Վարաչլուպի անվան գործարանը տալիս ե 275.000 տոնն. բայց վերակառուցումից հետո կտա մեկ միլիոն տոնն: Ինչպիս տեսնում եք, աշխատանքների ծավալը հսկայական է: Դրան ավելացրեք այնպիսի գիգանտների կառուցումը, ինչպիսիք են Կրիվառտինը, Զապարոժստալը և Մարիուպոլի գիգանտը:

Ընդումին հարկավոր ե հիշել, վոր մենք մեր սեփական ռարքայորումը չենք ունեցել, մեզ մոտ սարքավորում չեն կարողացել կառուցել, այդ սարքավորումը մեծ մասշտաբով արտադրելու համար գործարաններ չենք ունեցել:

Զնայած այդ բոլորին, այնուամենայնիվ վորոշ Հաջողություններ այստեղ մենք ունենք: Այսոր կվառեն Մագնիստկայի առաջին հալոցը: Այս ի՞նչ է նշանակում: Գործարկել մի հալոց գործող գործարանում—այդ արժե մոտավորապես 8-9 միլիոն ռուբլի, իսկ վառել առաջին հալոցը Մագնիստկայում, այդ նշանակում է դատարկ տեղում կառուցել այն ամենը, վոր անհրաժեշտ և առաջին հալոցը գործարկելու համար: Այդ նշանակում է, վոր հարկավոր եր կառուցել ելեկտրակայան, կոքսի վառարաններ, հանք մշակել, կառուցել հանք մանրող գործարան, կառուցել ոժանդակ ձեռնարկություններ: Այդ նշանակում է, թե հարկավոր ե կառուցել ողամբուղ և այն և այն: Մի խոռոշվ, նախքան մի հալոց վառելու հնարավորություն ձեռք բերելը, հարկավոր եր ծախսել Մագնիստոգորսկի գործարանի վրա ավելի քան 250 միլիոն ռուբլի: Հարկավոր եր կատարել ահազին աշխատանք, և այն կատարիեց փաստուեն մեկ և կես տարվա ընթացքում:

Նույնը նաև կուղնեցկի գործարանում: Այստեղ կատարված և հսկայական աշխատանք, վոր մենք հաղիպ թե պարզ պատկերացնում ենք: Այդ 2 գործարաններն այս տարի մեղ մետաղ էն տալու: Մագնիստնայա սարի վրա կառուցվող հալոցները չունենիրենց հավասարը Յեվրոպայում, իսկ Ամերիկայում, ասում են, յեղել ե մի այլպիսի հալոց և այն ել կարծեմ ներկայումս չի աշխատում: Քիչ աշխատանք չի պահանջի մեզանից այդ գործարանների տեխնիկային տիրապետելը, բայց մենք կտիրապետենք:

1932թ. սեպ մետաղագործության կավիտալ շինարարության ժամանակը վորոշված ե 1800 միլիոն ռուբլի: Այդ նշանակում է՝ 1932թ. կառուցել և գործարկել 26 հալոց, այսինչ 1931թ. մենք գործարկել ենք միայն 4 հալոց: Այդ նշանակում է, գործարկել 65 մարտենյան հալոց, 7 ելեկտրակառարան և 27 դլանող դաշտյան, վորոնց թվում 7 բլումինդ:

1932թ. գործարկելիք հալոցների ընդհանուր կարողությունը հավասար է 7,5 միլիոն տանն չուգունի, այսինքն համարյա 2 անդամ ալելի, քան ցարական Ռուսաստանում և մեկ միլիոն տանն ալելի, քան ներկայումս գոյություն ունեցող կարողությունը:

Մի տարվա ընթացքում մենք պետք ե ալելի քան կրկնապատճենը կարողությունը, հասնելով 13,5-14 միլիոն տաննի և մի տարվա ընթացքում գործի գնենք այնպիսի կարողություն, վորը

հավասար ե ամբողջ Անդիխայի արտադրությանը, այն ել նորագույն տեխնիկական մակարդակի վրա:

Գործարկելիք մարտենյան վառարանների լրիվ կարողությունը հավասար է 4,6 միլիոն տոնն պողպատի, այսինքն ալելի, քան ամբողջ նախապատճապման արտադրանքը (4,2 տոնն) և ներկայում մեր ունեցածի կիսից ալելի: Մի տարվա ընթացքում մենք պետք ե ավելացնենք պողպատի ձուլման ցեխերի կարողությունը 7½ միլիոն տոննից մինչև 12 միլիոն տոնն:

1932թ. գործարկելիք գյանող դաշտյահների լրիվ կարողությունը կազմում է 1,6 միլիոն պատրաստի դլանված 14 դազդահի համար: 1932թ. գործարկելիք 7 բլումինդներն ունեն 6,8 միլիոն տաննի սեղմած ձուլմայի կարողություն:

Ահա, ընկերներ, այս տարի կատարելիք մետաղագործության կազմակալ շնարարության ծավալը: Ինչպես տեսնում եք, այն փոքր չէ: Մեր կուսակցության կենտրոնն այս խորի լուծումը համարում է ամբողջ կուսակցության գործը:

Ի՞նչ է նշանակում կատարել սև մետաղագործության 1932թ. արտադրական ծրագիրը:

Այդ նշանակում է տալ յերկրին՝

9 միլիոն տոնն չուգուն,

9,5 միլիոն տոնն պողպատ,

6,6 միլիոն տոնն դլանվածք,

Այդ նշանակում է մեկ տարվա ընթացքում տալ 4 միլիոն տոննի աճ, այսինքն այնքան, վորքան արտադրվում եր ցարական Ռուսաստանում 1913թ.:

Կապիտալիզմի յերկրներին ի՞նչքան ժամանակ և հարկավոր յեղել այլպիսի աճ ստանալու համար:

Անգլիան սկզբնական չրջանում ուներ՝

4,9 միլիոն տոնն չուգուն—1864թ.,

9,5 միլիոն տոնն՝ 1899թ.:

Այսպիսով Անգլիայի համար հարկավոր յեղակ 35 տարի: Գերմանիան առաջին անգամ ուներ՝

4,9 միլիոն տոնն չուգուն՝ 1892թ.,

9,9 միլիոն տոնն 1902թ.:

Այսպիսով Գերմանիայի համար հարկավոր յեղակ 10 տարի: և Միացյալ Նահանգների առաջին անգամ ունեցին՝

9,6 միլիոն տոնն չուգուն 1882թ.,

9,2 միլիոն տոնն չուգուն 1890թ.:

Այսպիսով ՀԱՄ պետք յեղակ 8 տարի:

ԽՍՀՄ այդ նախապարհի պետք ե կտրի մեկ տարում:

«Փակ ձեզ, բայլչեկիներից, ո՞ւր ե շտագեցնում սատանան»,— կասի կուտակցական և մերձ-կուտակցական քաղքենին:

Պատասխանում ենք Լենինի հետեւյալ խոսքերով.

«Հեղափոխությունն արագ այն, վոր մի քանի ամսվա ընթացքում Ռուսաստանը իր քաղաքական կարգերով հասավ առաջավետ յերկրներին»:

Բայց այդ քիչ ե: Պատերազմն անողոք ե, նա հարցը գնում է անողոք կորականությամբ—կամ վոչնչանալ, կամ հանել առաջավոր յերկրներին և անցնել նրանցից նաև տնտեսականապես, Վոչնչանալ կամ ամբողջ ուժով, ուշանալ առաջ: Այսպես ե դբեւ հարցը պատմությունը» (Լենին, Հաստոր. 21, հջ 191)...

Իսկ մենք հետ ենք մնում: Նույնիսկ հասնելով 9 միլիոն տոննի, մենք տակավին 40 տարով հետ ենք մնում ՀԱՄՆ, իսկ կտրել այդ ճամապարհը մեղ անհրաժեշտ ե, ինչպես ասաց ընկ. Ստամբուլը տնտեսակարների կոնֆերենցիայում, 10 տարվա ընթացքում:

Կարո՞ղ ենք արդյոք իրագործել 1932 թ. սեպ մետաղագործության պյանը:

Յեթև բայլչեկիներն աշխատեն բայլչեկիկորեն, նրանք այդ ծրագիրը կարող են իրագործել, իսկ յեթե բայլչեկիները ծուլություն անեն, պատճառ բռնեն, թե այսինչն ե պակասում, այնինչը չկա և ոկտեն իրար վրա դցել, այն ժամանակ ծրագիրը մենք իրագործի: Իսկ ծրագիրը կարելի յե և հարկավոր ե իրագործել: Յերբ կուտակցությունն արդյունաբերության բոլոր աշխատողների հետ միասին ծավալում և ահագին պայքար հանուն այս ծրագրի, — մենք այդ ծրագիրը կիրագործենք և պատվավոր տեղ կդրակինք համաշխարհային մետաղագործության առարիգում:

1932 թ. ծրագրի իրագործումն ապահովում ե 1933 թ. 13—18,5 ժիւմն տոնն չուղունի գործը:

Սեպ մետաղագործության արտադրության և կապիտալ շինարարության պլանի խնդիրը կայանում ե վոչ միայն նրանում, վոր ահազին չափով ավելացնենք մետաղագործության արտադրանքի կարողությունը, այլև իրականացնենք կտրուկ վորակային բեկում մետաղագործության արտադրանքի կառուցվածքի մեջ, կտրուկ կերպով ավելացնենք բարձրորակ պողպատների և խողովակների արտադրությունը:

Հատուկ տեղ են գրավում վորակային, բարձրորակ պողպատ-

ները, և Փերրոձուլվածքները, վորոնք գործադրվում են վերահայալ վորակային պողպատների ձուլման համար:

Վորակային պողպատների կառուցվող և վերակառուցվող գործարանների լրիվ կարողությունն ե—1400 հազար տոնն, իսկ Փերրոձուլվածքների գործարանների կարողությունը՝ 170 հազար տոնն:

Սրտագրությունը 1932 թ. մինչև 660 հազար տոնն ավելացնելը, 1931 թվի 200·000 տոննի դիմաց, կախված ե մի շարք կառուցվող գործարանների առաջին հերթերի և վերակառուցվողների հաջող գործարկումից:

1932 թ. շինարարությունը պետք ե ապահովի այդ գործարանների ամբողջ մասց կարողությունը արտադրության մեջ ժողովնելը 1933 թվի ընթացքում:

Վորակային պողպատների գործում՝

Դնեպրովսկի՝ լրիվ կարողությունը՝ 600·000 տոնն, Ելեկտրոստալ՝ 120·000 տոնն:

«Սերպ ի Մոլոտ»՝ 100·000 տոնն:

Զլատառստի գործարան՝ 200·000 տոնն:

Վերիննեխտակի գործարան՝ 50·000 տոնն:

«Կրասնի Ակտյարը»՝ 300·000 տոնն:

Զեմանցուող պողքատի (պողպատի թերթ և ժամանեն) Զեմարինովի գործարան՝ 25·000 տոնն:

Ֆերբոնուլվածքների գործում՝

Դնեպրովսկի՝ լրիվ կարողությունը՝ 80·000 տոնն:

Չելյայինսկինը՝ 40·000 տոնն:

Զեստաֆոնինը (Վրաստան, ֆերրոմարգանեց)՝ 50·000 տոնն:

Խոլովակները մետաղագործական արտադրության ամենասուր դեֆիցիտային տեսակներից մեկն են: Խողովակների պակասությամբ արգելակում ե ժողովրդանտեսության մի շարք կարեվորագույն ճյուղերի և մասնավանդ նավթի ու կոմունալ տնտեսության զարգացումը: Այս տարի մենք ունեյինք խողովակների հակայական սով: 1932 թվին կառուցվում են խողովակի մի շարք գործարաններ: Գործող գործարաններում դրվում են խողովակի մի շարք պղքեզաներ, վորոնք նշանակալից չափով կավելացնեն խողովակների քանակը: Յերկաթե խողովակ արտադրված ե:

1930 թ.—263·000 տոնն:

1931 թ.—292·000 տոնն: ՀՀ 3

1932 թ. պլանն ե—432·000 տոնն:

Խողովակի քոլոր կառուցվող և վերակառուցվող գործարանների լին կարողությունն ե-1.700.000 տոնն:

Մագնիսոգորսկի գործարան (խողովակի ցեմ)՝ 470.000 տոնն:

Նիկոպոլինը՝ 410.000 տոնն:

Մարիուպոլի գործարանինը գործարկվելու յե (1933 թ. սկզբ-բին. 100.000 տոնն կարողությամբ նոր պիլցերնյան դաղդյահ),  
265 հ. տ.:

Տագանրովինը (գործարկվելու յե 1932 թ. վերջին. 100.000 տոնն կարողությամբ նոր պիլցերնյան դաղդյահ),<sup>1</sup> 155.000 տոնն:

Լիբկնելստի անվան գործարանինը (գործարկվելու յե 1931 թվի կեսերին 100.000 տոնն կարողությամբ նոր պիլցերնյան դաղ-դյահ)՝ 127.000 տոնն:

Պերվոսրամկի գործարանինը՝ 85.000 տոնն:

Դրանցից 1932 թվին պետք է գործարկվեն՝ Տաղանրովի գործարանը (նոր պիլցերնյան դաղդյահ)՝ 100.000 տոնն, Լիբկնելստի անվան գործարանի գործող դաղդյահների վերակառուցման ավարտումը կավելացնի նրա կարողությունը 15.000 տոննով: Լենինգրադի և Մոսկվայի «Կրամնայա Տրուբա» գործարաններում գործարկվելու յե հնոց՝ 27.000 տոնն կարողությամբ, չուգունից խողովակ ձուլող 5 գործարան (Ռոստով, Լենինգրադ, Բիլլիմբայ, Ախտիկա, Մագիլով), պետք է գործարկվեն 1932 թ. առաջին կիսամյակում, յուրաքանչյուրը 15.000 տոնն կարողությամբ, իսկ բոլորը միասին՝ 75.000 տոնն կարողությամբ:

Այս ժամանակ, յերբ մենք իրականացնում ենք իր վիթխարիությամբ չտեսնալած մի ծրագիր, ըստ եյության՝ նոր գորեղ մետաղագործության ստեղծման ծրագիր, կալիստալի առաջարկորդ յերկրներում ճշնաժամբ հետ ե շարտել սև մետաղագործությունը տառնյակ տարիներով:

### ՆՐԱՆՅ ՄՈՑ ՀԱԼՈՅՆԵՐԸ ՀԱՆԳՅՎՈՒՄ ԵՆ, ՄԵԶ ՄՈՑ՝ ՎԱՌՎՈՒՄ ԵՆ

ՀԱՄՆ. յեղած 307 հալոցից 1931 թ. հոկտեմբերի վերջին գործում եր 69, այնինչ 1929 թ. հունիսին գործում ելին 220:

Գերմանիայում 155 հալոցից 1931 թ. նոյեմբերին աշխատում եր 47, այն ժամանակ, յերբ 1929 թ. աշխատում եր 103:

Անգլիայում 400 հալոցից 1931 թ. նոյեմբերին աշխատում եր 70-ը, մինչդեռ 1929 թ. ողոստոսին աշխատում եր 170:

Նույնիսկ իրենց համար լավագույն ժամանակաշրջաններում

մավին չողագործելով հալոցների ամբողջ կարողությունը, կապիտալիստները հանգնում են վերջին տասնյակ հալոցները՝ ճգնաժամի հարվածների տակ:

Իսկ մենք վառում ենք և կվառենք հալոց-հալոցի հետևից:

### ԱԾՈՒԽ

Բնկերներ, 2-րդ արմատական խնդիրը—ածուխն ե: Ածխի այն քանակությունը, վոր մենք ներկայումս արդյունահանում ենք, չի բավականացնի մետաղագործությունն ապահովելու համար: Այն հանգամանքը, վոր մետաղագործական գործարանները անեն 2-3 որվա պաշարներ—հավերի ծիծաղն անդամ կարդի: Յեթե վաղը տրանսպորտում վորեւ խանգարում առաջանաւ և նա ժամանակին ածուխ չհասցնի, հալոցները պետք է կանգ առնեն:

Այն ածուխը, վոր ստանում են այսոր մետաղագործական գործարանները, վատ վորակի յե՝ տալիս և մոխրի շատ մեծ տուես:

Ածխի վորակին հարկավոր ե ուժ տալ: Հարկավոր ե ուժ տալ թե քանակին և թե վորակին: Այս տարի մենք պետք ե տանք 90 ժիկան տոնն: Այլապես վատելանյութի սովոր չի վերացվի: Դրա համար գոյություն ունեցող հանքահորերում մենք պետք ե առաջ գնանաք մեքենացման դովլ:

Այս տարի մենք տվինք 31,7 միլիոն տոնն ածուխ մեքենացման ապարհով, կամ 57,1 տոկոսն ամբողջ հանույթի: 1932 թ. մենք պետք ե տանք 63 միլիոն կամ ամբողջ հանույթի 72 տոկոսը, վորից Դոնբասում՝ 44,5 միլիոն տոնն կամ 81 տոկոս: Քարածխի արգոյունաբերության ասպարիզում 1932 թ. բանելու յե ավելի քան 1000 ժամը վրուբյան (փորող) մեքենա. փոխանակ 1931 թ. 880-ի: Թեթև վրուբյան մեքենա լինելու յե 342 հատ, փոխանակ 1931 թ. 260-ի: Հատող մուրճ լինելու յե 4.073 հատ, փոխանակ 1931 թ. 2900-ի:

Մեքենացման ասպարիզում մենք անշուշտ այժմ ունենք հաջողություն: Այդ հաջողությունը հարկավոր ե ավելի զարգացնել: Որեւս ինձ հաղորդեցին թե ինժեներների և տեխնիկների մի խումբ տվել ե այսպես կոչված «բաղի կտուց» մեքենա, վորը նշանակելի չափով լուծում ե «Նավալկայի» հարցը: Յեթև մեքենան հաջող դուբս գա, յեթև իսկապես նա լայնորեն տարածվի, ապա միայն Դոնբասում մենք հնարավորություն կունենանք աղատել 24-30 հատար բանվոր: Այդ անշուշտ նշանակալից չափով կավելացնի առաջ-ընթացքի արագությունը:

**Սուլսոմլին.** — Շուտով կտանք ածուխի կոմբայն է

Կապիտալ շինարարություն: Մենք քարածխի արդյունաթերթության մեջ այս տարի ներդրում ենք 810 միլիոն ռուբլի, փոխանականցյալ տարվա 627 միլիոն ռուբլու և 1930 թ. 320 միլիոն ռուբլու և 1932 թ. կառուցման ընթացքի մեջ են գտնվելու (1931 թ. շահագործման դրված հանքահորերի ավարտման հետ միասին) 380 հանքահոր, տարեկան 240 միլիոն տոնն արտադրողականությամբ, Դրանցից 1932 թ. պետք է շահագործման դրվի 89 հանքահոր տարեկան 38 միլիոն տոնն արտադրողականությամբ:

Ահա ածխի կապիտալ շինարարության և արտադրական ծրադրի ծավալը:

Այս տարի մենք պետք ենք վճռարար զբաղվենք, այսպես կոչված, տեղական շրջանների տեղական ածխի, զարգացման գործով: Մինչև այժմ Դոնբասը մատակարարել են մինչև այսօր ել մատակարարում են Մոսկվային և Լենինգրադին: Դոնբասի ածուխը հասնում է նույնիսկ մինչև Բերեղնյակի և Պերմ: Այս բանը ակներեկ է, վոր ապագայում այլևս չի հաջողվի: Նախ և առաջ՝ Ուկրայնայում մետաղոգործությունն ավելի լայն շափական ծավալելու դեպքում, այնտեղ կհարկավորվի ածխի հսկայական քանակություն: Ախար 2-րդ մետաղագործական պատվանդանն ստեղծելիս մենք բնավ չենք մոռացել Ուկրայնան: Ուկրայնայի մետաղագործությունը զարգանում է հսկայական չափերով: յես խոսել եմ արդեն Մակեյվկայի Վարաշիլովի անվան, Զերժինսկու անվան գործարանների վերակառուցման մասին. կառուցվում են նոր գործարաններ՝ Կրիվորոժսկի (ձայն՝ «Մարիուպոլինը»), Մարիուպովի, Նիկոպովի խողովակի գործարանները:

Կամիոր. — Դնեպրոստրոյը:

Որշոնկիձեն. — Դնեպրոստրոյը, Կերչի գործարանը: Ահա թէ ինչքան գործարան է կառուցվում Ուկրայնայում: Զե՞ վոր այդ պահանջելու յի կոքսացվող ածխի հսկայական քանակություն: Բացի դրանից, հարկավոր է աշակել նաև Հաղորդակցության ձանալարհների ժողկոմատին: Չի կարելի շարունակել այն թայտառակությունը, յերբ մենք ածուխն այդպիսով մեր Միությայտառակությունը, յերբ մենք ածուխն այդպիսով մեր Միության մի յերկից մյուսն ենք փոխադրում և ապա ինքնեռ ենք առաջարարությունը թէ փոխադրական կաղմը չի բավականացնում: Յեթ այդակառութը, ընկերությունը մուկովյան ավաղանի, Բարավի պատճառով, ընկերությունը մուկովյան ածխի հարկավոր է ամառականի, Թալուգովի, Տկվորչելի ածխի, Ուկրայնայի, Թուբքմենստաչի, Կաղակստանի, Պեչորիայի ածխի հարցը, Սախալինի ածխի հարցը:

Հարցը, — այս հարցերը պետք են գրվեն ամբողջ վճռականությամբ շաբախովոր են վճռաբար առաջ շարժել այս գործը, վորպեսզի առաջիւղագույն չափով աղասիվենք Մոսկվայի շրջանի համար ածուխ ժերելուց: Մոսկվայի շրջակայքում, որինակի համար, կա հսկայական քանակությամբ ածուխ վարկավոր է արդյունահանել: Յեթե համեմատենք անցյալ տարվա հետ, ավելացում կա, բայց այդ քիչ է:

Լենինգրադի շրջակայքում գտնվող հարովիչի մասին: Այդ հարցը պետք է պարզել վերջնականապես. յեթե գուրս գա, վոր մենք այստեղ ունենք ածխի բավարար պաշարներ, դրանք պետք են շակել և այդ կլինի խոշոր թեթելություն:

Հեռավոր արևելքի ածուխը (Դալուգոլ): Զե վոր մինչև այժմ մենք ինչ վոր աներեկայելի բան ենք անում: Զերյոմուխովիկի շրջանից ածուխ ենք տանում, սատանան զիտի թե մինչև ուր, վորպեսզի բավարարենք յերկաթուղիներին մինչև Վլատիվաստոկի: Ենող վորում այդ ածխի կիսից ավելին «ուսումն» այդ ածուխը տանող չողեկառքերը: Այնինչ հենց Վլատիվաստոկի մոտ մենք ունենք սքանչելի ածուխ. միայն հարկավոր է այդ ածուխն արդյունահանել ավելի մեծ քանակությամբ, քան մենք այսոր արդյունահանում ենք:

Ռոյզենիման. — Այո՞, այո՞, իհարկե:

Որզոնիկիձեն. — Հատուկ կերպով պետք է դրվի Ռուալի կոքսացվող ածխի հարցը: Ռուալում մենք ունենք կոքսացվող ածուխներ: Ռուալում մենք ունենք դորշ ածխի մեծ հանքավայրեր: Ռուալի ածխի մշակումը հարկավոր է ուժգնապես ընդարձակել:

1931 թվին Ռուալում շահագործման են դրվել չորս հանքահոր 240.000 տոնն տարեկան արտադրողականությունը: Այնտեղ կառուցվում են 36 հանքահոր տարեկան 20 միլիոն տոնն արտադրողականությունը: 1932 թ. կառուցվում են հանքահորեր՝ տարեկան 4.600.000 տոնն արտադրողականությունը: Ռուալուգոլ 1931 թ. ավելի և մոտավորապես 2.800.000 տոնն, իսկ 1932 թ. ծրագիրը չափասար է 5.900.000 տոննի: Դեռ, ըստ յերեւյթին մենք հարկագործած կլինենք ավելացնել այդ ծրագիրը և ավելացնել նշանակելի չափով:

Զայն տեղից. — Ռուալին քիչ եք տվել:

Որզոնիկիձեն. — Յերեվի սխալ հաշիվ ենք արել: Այս տարի տեղական ածխային շրջաններում մենք ներդրում ենք խոշոր միջոցներ: Մոսկվաուղովի համար ներդրում ենք այս տարի 55 միլիոն

ուուրի, փոխանակ անցյալ տարվա 44 միլիոն ուուրի : Գալու գովազնամաբ մենք ներդրում ենք 26 միլիոն ուուրի, փոխանակ 15 միլիոնի :

Մոսկվամերձ չըջանում 1931 թ. մենք դործարկել ենք 16 հանքահոր, տարեկան չորս միլիոն տոնն արտադրողականությամբ, կառուցվում են 36 հանքահոր՝ տարեկան 9.600.000 տոնն արտադրողականությամբ . 1932 թ. Հիմնվում է 14 հանքահոր՝ տարեկան 4.200.000 տոնն արտադրողականությամբ : Մոսկվաուգուլը 1932 թ. պետք է տա 5,7 միլիոն տոնն՝ 1931 թ. 2.340.000 տոննի փոխարեն : Ածխի հանույթը մի տարվա ընթացքում 2 ½ անգամ ավելացնելու համար հարկավոր է թունդ աշխատել :

Ընկերներ, մեզ համար հատուկ նշանակություն ունի կուզնիու ավազանի՝ Մագնիստադրոսկը, Կուզնեցկի դործարանը, ապագա-Տագիլի դործարանը—այդ բոլորը հենվում են Կուզնեցկի ածխի վրա : Այստեղ մենք 1931 թ. շահագործման դրինք 44 հանքահոր, տարեկան 6,3 միլիոն տոնն արտադրողականությամբ : Կառուցվում է 49 հանքահոր, տարեկան 45,2 միլիոն տոնն արտադրողականությամբ, 1932 թ. շահագործման պետք է հանձնվի 13 հանքահոր՝ 7 միլիոն տոնն տարեկան արտադրողականությամբ : 1932 թ. Հիմնվում է 5 նոր հանքահոր՝ տարեկան 16 միլիոն տոնն արտադրողականությամբ : 1932 թ. Կուզնեցկը պետք է տա 10 ½ միլիոն տոնն ածուխ . այս ծրագիրը լրիվ իրագործելու դեպքում էլ վառելանցուքի հաշվեկշռի լարվածությունը չի վերացվի :

Ածխային Յ-րդ բազան—Կարագանդան է : Այստեղ աշխատանքը սկսվել է միայն անցյալ տարի : Այժմ կառուցվում է 23 հանքահոր, 7,2 միլիոն տոնն տարեկան արտադրողականությամբ : 32 թ. Հիմնվում է 14 հանքահոր, տարեկան 11 միլիոն տոնն արտադրողականությամբ :

1931 թ. Կարագանդայում կարիտար շիանաբարության վրա ծախոված է 22 միլիոն ուուրի, իսկ այս տարի հատկացված է 40 միլիոն ուուրի :

Վառելանցութիւն մյուս տեսակներից 1931/32 թվերին մենք պետք է տանք՝ 14,3 միլիոն տոնն տորֆ, սակայն մի վերապահությամբ՝ վոչ այնպիսի տորֆ, վորագիսին մեզ հրամցրին այս տարի :

Այն, ինչ վոր այս տարի մեր գլուխը բերին տորֆի խնդրում, վեր է ամեն տեսակ խայտառակությունից : Մեծ քանակություն, մեծ թիվ տալու համար՝ չքաշվեցին տորփի հետ միասին հանձնել մեզ վորքան կարելի յի շատ ջուր :

Ոռյակենման մեջ քեզ բան : Ա՛յ քեզ մարդկանց աչքը փոշե փշողներ :

Որջոնիկիրձե ։ Եավիթ այս տարի մենք պետք ե ստանանք 27,4 միլիոն տոնն, փոխանակ անցյալ տարվա 23,1 միլիոն տոննի :

Նավթարդյունաբերությունը մեղ մոտ իր տեխնիկական մակարդակով թերևս բարձր ե բոլոր մյուս յերկրներից : Իր գերակառուցմանը նա վազուց ե անցել : Նավթարդյունաբերությունը այս տարի կարող է տալ մեղ ավելի նավթ, յեթե այստեղ խողովակների, մեքենաների ճգճում չլիներ :

Ոռյագիտման ։ Ճիշտ է :

Որջոնիկիման ։ Այստեղ կա ևս մի պատճառ—այս թե մեր տրանսպորտը կարողանա նավթավայրերից դուրս տանիլ մեր սւնեցած ամրությամբը : Ներկայում Բագվում ե Գրողնիում տառացի ասած լցոված են բոլոր նավթամբարները, իսկ յերբ նավթամբարները չեն բավականացրել, մենք հարկադրված ենք յեղել հորեր գորել և նավթն այնտեղ բաց թողնել : Այն ժամանակ, յերբ մեղ մոտ, յերկրի ներսում նավթը չի բավականացնում, Բագվում և Գրողնիում դուրս չուրս չուրս գարված նավթ մնացել է մոտ 1½ միլիոն տոնն :

Կոսիոր ։ Մեռած կապիտալ :

Որջոնիկիման ։ Այս տարի պետք է ինչպես հարկն ե գրվի քերպութարի մշակությունը : 1931 թ. մենք ստացանք 146.000, իսկ 1930 թվին շատ ավելի պակաս եր յեղել : 1932 թ. մենք պետք ե տանք 600.000 տոնն թերթաքար : Անկասկած, վառելանցութիւն այս պետք է խաղա նշանակելի դեր, յեթե ինչպես հարկն ե զարգացնենք այն :

Ահա այն խնդիրները, վոր կանոնած են մեր առաջ վառելանցութիւնը ասպարիզում :

### ՄԵՔԵՆԱԿԱՇԻՆՈՒԹՅՈՒՆ

Խորհրդային մեքենաշինության զարգացման հարցը Խորհրդային պետական տնտեսական անկախության ամբացման հարցն է :

Քիմիական արդյունաբերության զարգացումը, մետաղագործության, նավթարդյունաբերության, տրանսպորտի, ելեկտրոֆիկացիայի, գյուղատնտեսության մեքենացումը, շինարարության և փայտեղենի մթերումների մեքենացումը, ժողովրդական լայն մասսաների պահանջների սպասարկումը, մեր ամբողջ կառուցվածքի վերակազմությունը կախված է, Խորհրդային մեքենաշինության հետագա ուժեղ և ծավալուն դարձացումից :

Մենք ունենք հաջողություններ, բայց մեզ անհրաժեշտ ե մեռքենաշինության հետազա վիթխարի աճումը։ Կոնկրետ կերպով 1932 թ. մեր մեքենաշինության առջև կանգնած են հետեւյալ խընդիրները։

Սարքավորումով ապահովել կառուցվող մետաղագործական գործարանները, այդ նպատակով ստեղծելով ողամուշի հանքային ամբարձիչների, հալոցներին անհրաժեշտ նոտիսի վերահանիչների, ծանր մարտենյան ամբարձիչների, խվանների, գաղղողերների. գեղինտեղբանտորների, գլանման դաղդյաների, հասուկ մետաղագործական ելկարոսարքավորման, ինքնարենաթափ վագոնների, վագոն-կշեռքների, անկ-չոգեկառքների, չափման դործիքների և այդ բոլոր սարքավորումների պահեստի մասների արտադրություն։

Արագայնել կրամատրոսկի և Ռւրալի ծանր մեքենաշինության գործարանների կառուցման ավարտումը, — դործարաններ, վորոնք ապահովում են՝ իրենց արտադրությունը լրիվ կարողության չափով ընդարձակելու դեպքում՝ Ռւրալու աշտրոյի 120 հազար տոնն պատրաստի արտադրանք բաց թողնելը, վորից՝

Հալոց-վեց կոմպլեկտ։

Մարտենյան հող— 20 կոմպլեկտ։

Գլանող դաղդյան— 12.

Մյութ թվում յերկու բլյումինդ։

50 գաղողեներատոր։

Սարքավորում գունավոր մետաղագործության համար 5000 տոնն։

Լեռնարդյունարերության սարքավորում — 17.000 տոնն։

Դարբնոցի մամլիչներ — 5000 տոնն։

Պահեստի մասեր — 2000 տոնն։

Խոշոր գլան — 20.000 տոնն։

Կրամմաշտրոյի 150.000 տոնն տարեկան արտադրանքը, վորից՝

Հալոց՝ վեց կոմպլեկտ։

Մարտենյան հող՝ 30 կոմպլեկտ։

Գաղողեներատոր՝ 150 կոմպլեկտ։

Գլանող դաղդյան՝ 16 կոմպլեկտ։

Բլյումինդ՝ 3 հատ։

Խառատի մեքենական դաղդյան՝ 16 հատ։

Հուժկու վերահանիչ՝ 30 հատ։

Կոքսի արտամղիչ՝ 20 հատ։

Գաղողամուլ՝ 16 հատ։

Միակոփ թմբկամեքենա և գլան՝ 24.000 տոնն։

Այսպիսով, այս յերկու մեքենաշինական վիթխարի գործառնները՝ Ռւրալինը և կրամատորսկինը հնարավորություն են տալու մեջ մեկ կամ մեկ ու կես տարուց հետո միայն սև մետաղագործության համար տարեկան ապահովել յերկու այնպիսի գործարանների սարքավորում, վորախին և Մագնիսոդորսկինը։ Եթենք խոսում մեծ քանակով սարքավորման մասին, վոր պատրաստվելու յեւ լեռնարդյունարերության, գունավոր մետաղագործության, հուժկու կաթսաների և խողովակների կառուցման համար չենիլիք գլանների մասին։

Մասնակի կերպով այդ գործարանները պետք ե սկսեն արտադրանք տալ արդեն 1932 թ.։

Իրենց հզորությամբ և տեխնիկական կատարելագործված սարքավորումով, այդ գործարաններն իրենց հավասարը չունեն աշխարհում։ Այսպիսով, այս սալպարիզում ԽՍՀՄ-ն վոչ միայն հասնում, այլև առաջ և անցնում տեխնիկական տեսակետով առաջարկում կոր կապիտալիստական յերկներից։

Պետք է ապահովել ածխարդյունարերությունն անհրաժեշտ սարքավորումով, վորի համար արագացնել հանքարդյունաբերության սարքավորման Սիբիրի գործարանի շինարարությունն ու ավարտել Ռւելյայնայի և Ռւրալի վերակառուցվող գործարանները։

Պետք է իրավործեն ամեն գնով չողեկառքերի և վագոնների պատրաստման ծրագիրը։ ավարտել 1932 թ. Լուգանսկի շոգեկառքի գործարանը և ծավալել Ն.-Տագլի վագոնի գործարանի կառուցումը։

Հենց այս տարի ձեռնարկել չողեկառքերի յերկու գործարանների կառուցմանը, և մի վագոնաշինական գործարանի կառուցմանը։ Լայն հմքերի վրա գնել մեքենաների արտադրությունը քիմիական գործարանների համար (Ռւրալի մատչառոյ)։

Ավարտել Զելյաբինսկի տրակտորի գործարանը և գործարկել 1932 թ. վերջերին։

Ելեկտրոտեխնիկական արդյունաբերության և կաթսատուրինների շինարարության զարգացումը հանդիսանում ե մերժողովրդական տնտեսության ելեկտրիֆիկացիայի վիթխարի թափանցիկության համար հիմքը։ Այս տարի մենք Միության ելեկտրակայաններում պետք ե մտցնենք նոր ուժի մեկ և կես միլիոն կիլովատ։

Պուրագարդեն յերկրորդ հնդկական թեղիսներից դիտեք, վոր

Հաջորդ հնկամյակի վերջում՝ 1937 թվականին, մենք մեր յերկրին պետք է տանք 100 միլիարդ կիլովատ ժամ էլեկտրական էներգիա:

Ժողովրդական տնտեսության էլեկտրիֆիկացիայի այդ վիճակին ծագալը սարքավորումով և մեքենաներով ազահովելու համար, անհրաժեշտ է ամեն կերպ զարկ տալ էներգետիկ մեքենաշնությանը: Դրա համար անհրաժեշտ է՝

1932 թ. առաջին կիսամյակում գործարկել նարկովի տուրբինի գործարանը 1,5 միլիոն կիլովատ ուժով:

Նույն թվականին պետք է ձեռնամուխ լինել էլեկտրոմեքենաշնական մեծ կոմբինատի շինարարությանը Արևելքում:

Վերակառուցել 1932 թվականին Տագանրոգի շոգեկարսայի գործարանը, վորի տարեկան արտադրանը՝ 1933 թվականին կազմելու յև 400 հազար քառ. մետր, իսկ կաթսա-տուրբինների շինարարության 1932 թ. ամրող ծրագիրը կազմում է միայն 326 հազար քառ. մետր:

Անհրաժեշտ է ձեռնարկել շոգեկարսաների գործարանի շինարարությանը Ռյալալում, վորպեսզի 1934 թվականին նրա արտադրականությունը հասնի 700 հազար քառ. մետր ընդհանուր մեկրես ունեցող կաթսայի:

Կառուցել Տագանրոգում նոր հզոր ցեխ (գործարկումը 1933 թ.)՝ մինչեւ 40 մթնոլորտ մնչում ունեցող շոգեկաթսաների համար դողման գլաններ պատրաստելու նպատակով:

Ավարտել Լենինգրադի մետաղագործական գործարանի նոր հիմքուսուրբինային արիեստանցի կառուցումը, վորը պետք է արտադրի տարեկան 500 հազար ձիու ուժի հիգրոտուբին:

Նավթի արդյունաբերության հետաձագարանը գարզացումը դրժվարանում և սարքավորման՝ խողովակների, նավթահանների, փորսղաղդյաների և մեծ թվով կրեպինդների և տրուբչատկաների պակասությամբ:

Նավթարդյունաբերության համար սարքավորում արտադրելու հարցը պետք է դնել տմենասուր կերպով: 1932 թ. պետք է առանձնացվեն վորոշ քանակությամբ գործարաններ, նավթարդյունաբերության սարքավորման պահանջը լրիվ բավարարելու համար: Այդ հարցի լուծումը չի կարելի հետաձգել վոչ մի որով:

Նույնը պետք է ասել նաև գունավոր մետաղաձուլման համար արթավորում արտադրելու և գետային ու ծովային նավաշինությունը ծավալելու մասին: Դուք բոլորդ ել գիտեք, թե ինչպիսի հակայական միջոցներ ենք ծախսում մենք փոխադրումների վրա: Յես արդեն ասացի, վոր Վոլգայի և Կասպից ծովի նավթարար

